

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Կը Բացայայտուին Պատերազմի Պարտութեան Իսկական Պատճառները

Տակաւին երկար ժամանակ պիտի խօսուի ու գրուի 44-ի պատերազմի ընթացքին Հայկական կողմի կրած ծանր պարտութեան պատճառներուն մասին, որուն ծալքերը կամաց-կամաց ի յայտ կու գան ու կը բացայայտուին իսկական պատասխանատուները, որոնց տասնամեակի վրայ երկարող անտարբերութիւնը ազգը մատնեցին նման աղէտի:

Սթոքհոլմի մէջ գործող Սիջազգային Խաղաղութեան Ուսումնասիրութեան Հիմնարկի անցեալ շաբաթ հրապարակած տեղեկութիւնները լոյս կը սփռեն այն իրողութեան վրայ, որ ամբողջ տասնամեակ մը Հայկական Ձիմուած Ուժերու սպառազինումը ու արդիական գէնքերով մատակարարումը չեն արժանացած պատշաճ ուշադրութեան ու չեն ընթացած իրավիճակի պարտադրած հրամայականներուն համապատասխան:

Համաձայն Հիմնարկի հրապարակած վերջին տուեալներուն, 2011-2020 թուականներու ընթացքին Պաքուն ներմուծած է 3 միլիարդ 274 միլիոն տոլարի սպառազինութիւն, Հայաստանը՝ 398 միլիոն տոլարի: Հայաստանեան ներմուծումներու գերակշիռ մասը՝ 248 միլիոն տոլարի սպառազինութիւնը իրականացուած են 2018 թուականի Թաւշեայ Յեղափոխութենէն յետոյ՝ 2019-ին:

2018 թուականի Ապրիլեան քառօրեայ պատերազմէն ետք, երբ նախագահ Սերժ Սարգսեան յայտարարեց թէ, Հայկական բանակը կը կռուէր 80-ականներու գէնքերով շատեր խորհեցան թէ ան փոխաբերական իմաստով տուած է այդ օրինակը: Այժմ ի յայտ կու գայ որ, ոչ թէ մինչեւ այդ, այլ եւ 2016-էն ետք ինկած ժամանակաշրջանին եւս Հայկական բանակի կարողութիւնը էական փոփոխութեան չէ ենթարկուած եւ քայլեր չեն առնուած որոշ չափով հաւասարակշռութիւն հաստատելու Ատրպէյճանի զինուորական կարողութիւններուն հետ: 2011-2018 Հայկական բանակին վրայ ծախսուած է 150 միլիոն, որ համազօր է տարեկան շուրջ 20 միլիոն տոլարի: Այդ գումարով այսօր Երեւանի մէջ հազիւ կարելի է կառուցել երկու կամ երեք շքեղ դղեակ: Այդ գործերով է որ զբաղած էին նախկին օլիգարխիկ համակարգի վեր-

«Մեր Թաւշեայ Մանտաթը Փոխարինեցէր Պողպատեայ Մանտաթով»: Քարոզարշաւի Առաջին Օրը Յայտարարեց Նիկոլ Փաշինեան

Հայաստանի մէջ պաշտօնապէս սկսաւ արտահերթ ընտրութիւններու քարոզարշաւի, որ կը շարունակուի մինչեւ Յունիսի 18-ը: «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան ընտրական ցուցակը գլխաւորող Նիկոլ Փաշինեան իր ընտրարշաւը սկսաւ այցելելով Արմաւիրի մարզի տարբեր համայնքներ ու ամէնուրեք արժանացաւ ժողովրդային մէջ ու խանդավառ ընդունելութեան:

«Մեր Թաւշեայ մանտաթը փոխարինեց պողպատեայով», Փաշինեանի Արմաւիրի մարզին մէջ նման ուղերձով դիմեց իր աջակիցներուն:

«Ոմանք ասում են, որ Յունիսի 20-ին եւ դրանից յետոյ, էսպէս ասած, իրենք կրելու են, մենք էլ ասում ենք՝ ձեր պատիժն էք կրելու: Առնուազն 60 տոկոսով քուէ ենք ակնկալում, որպէսզի մենք ձեր տուած ուժեղ եւ պողպատեայ մանտաթով արմատախիլ անենք Հայաստանի քաղաքական դաշտից այն ուժերին, ովքեր ուզում են քաղաքացիական պատերազմ հրահրել Հայաստանի Հանրապետութիւնում», - ընդգծեց վարչապետի



Վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեան քարոզարշաւի ընթացքին

պաշտօնակատարը:
Փաշինեան նախ խօսեցաւ բանավեճի իր հրաւերին ի պատասխան երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի յայտարարութեան մասին:
«Անոնց ամբողջ իշխանավարումը եղած է ոչ այլ ինչ, քան սեփական ժողովուրդին մենամար-

տի հրաւիրելը եւ գնդակահարելը: Անոնք 2008 թուականի Մարտի 1-ին են մենամարտի հրաւիրել ու գնդակահարել, ընդ որում՝ առանց հրաւերի», - յայտարարեց Փաշինեան:

Ապա պատասխանեց երրորդ
Շար.ը էջ 5

Հայաստան Ամենաշատ Սպառազինութիւններն Ծած է 2018-էն Յետոյ

44-օրեայ պատերազմին նախորդած տասը տարուայ ընթացքին՝ 2011-2020 թուականներուն, Ատրպէյճանը Հայաստանէն 8,2 անգամ աւելի շատ սպառազինութիւններ մուծած է, որով 2/3-րդը Պաքուն ստացած է ՀԱՊԿ անդամ Ռուսաստանէն եւ Պելառուսիայէն, յայտնած է Սթոքհոլմի մէջ Միջազգային խաղաղութեան ուսումնասիրութեան հիմնարկը՝ SIPRI-ը:

Ըստ հիմնարկի հրապարակման, քանի որ ո՛չ Հայաստանը, ո՛չ Ատրպէյճանը չունին նշանակալի ռազմական արդիւնաբերութիւն, հարկադրուած են սպառազինութեան գերակշիռ մասը ներմուծել, եւ 2011-2020 թուականներու ընթացքին, Պաքուն ներմուծած է 3 միլիարդ 274 միլիոն տոլարի սպառազինութիւն, Հայաստանը՝ 398 միլիոն տոլարի: Ընդ որում, հայաստանեան ներմուծումներու գերակշիռ մասը թուագրուած են 2018 թուականի Թաւշեայ յեղափոխութենէն յետոյ՝ 2019-ին, միայն այդ տարի Երեւանը ներմուծած է 248 միլիոն տոլարի սպառազինութիւն կամ տասը տարուայ ընթացքին ներմուծուածի 62,3 տոկոսը:

SIPRI-ի հետազոտողներու բերած թիւերուն համաձայն, 2011-2020 թուականներու ընթացքին, Ատրպէյճանին մատակարարած սպառազինութեան 60,1 տոկոսը

եկած է Ռուսաստանէն, 26,6 տոկոսը՝ Իսրայէլէն, 7,1 տոկոսը՝ ՀԱՊԿ-ի գծով Հայաստանի մէկ այլ դաշնակից Պելառուսիայէն, Թուրքիայէն՝ 2,9 տոկոսը, այլ երկիրներէ՝ 3,3 տոկոսը:

Հայաստանի պարագային եւս Ռուսաստանն է հիմնական մատակարարը՝ ամբողջ սպառազինութեան 93,7 տոկոսը ռուսաստանեան է, յաջորդը Յորդանանն է՝ 5,3 տոկոս, երրորդ տեղը Ուքրաինան է՝ 1 տոկոս:

Այսինքն, ըստ հետազոտութեան, 44-օրեայ պատերազմին նախորդած տասը տարիներուն Ռուսաստանը գրեթէ երկու միլիարդ (1 միլիարդ 967 միլիոն) տոլարի սպառազինութիւն մատակարարած է Ատրպէյճանին, Պելառուսը՝ աւելի քան 232 միլիոն տոլարի: Հայաստանին Ռուսաստանը մատակարարած է 372,9 միլիոն տոլարի սպառազինութիւն:

SIPRI-ի համաձայն, 2011-2020 թուականներուն, Ռուսաստանը Հայաստանին մատակարարած է հետեւեակի մարտական մեքենաներ, հրասայլեր, հակաօդային պաշտպանութեան միջոցներ, համազարկային կրակի ինքնամուղ համակարգեր: 2016-ին Մոսկուան Երեւանին փոխանցած է «Իսքանտեր»

Լեռնային Ղարաբաղը Պայտընի Եւ Երտողանի Յառաջիկայ Հանդիպման Օրակարգին Վրայ

Միացեալ Նահանգներու նախագահ՝ ձոզէֆ Պատընի եւ Թուրքիոյ ղեկավար՝ Ռէճէպ Էրտողանի՝ Յունիս 14-ին Պրիւքսելի մէջ ծրագրուած առաջին դէմ առ դէմ բանակցութիւններու օրակարգին վրայ ընդգրկուած է նաեւ ղարաբաղեան հակամարտութիւնը: Այս մասին երկու շաբթի երեկոյեան Սպիտակ տան մէջ կայացած ասուլիսի ժամանակ յայտարարեց Միացեալ Նահանգներու նախագահի ազգային անվտանգութեան գծով խորհրդակազմի ղեկավար Սալիվանը:

«Ինչ կը վերաբերի նախագահ Էրտողանի հետ հանդիպման, ապա այն պիտի կայանայ ՆԱԹՕ-ի գազաթնափողովի ծիրէն ներս: Բանակցութիւններու օրակարգը բաւական ծաւալուն է՝ այնտեղ ընդգրկուած են տարածաշրջանին մէջ այս պահուն առկայ խնդիրները, անոնց կարգին, բնականաբար, իրավիճակը Միջերկրական ծովու արեւելեան հատուածի, Սուրիոյ, Իրանի ու Լեռնային Ղարաբաղի», - յայ-

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

**Ռուս-Թուրքական Ձեռաչափի
Յայկական Վերջին Արգելքը**

ՀԱՅԿ ԻՍՐԱՅԷԼԵԱՍ

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը Յունիսի 7-ին արեց երկու յայտարարութիւն, թեմատիկ առումով միմեանցից տարբեր: Մէկը վերաբերում էր Հայաստանում պետական դաւաճանութեան դէպքի բացառականը, ըստ որի, արցախեան առաջին պատերազմի մասնակիցներ, որոնք յետոյ պարզեւտրուել են նաեւ մարտական ծառայութեան պետական պարզեւտրուել, տարիներ առաջ հաւաքագրուել են թուրքատարայճանական յատուկ ծառայութիւնում եւ մինչեւ անգամ Արցախի դէմ 44-օրեայ պատերազմում կարեւորագոյն տեղեկութիւններ մատակարարել Ատրպէյճան, նպաստելով հայկական մարդուժի, սպառազինութեան, ռազմավարական օբիեկտները ճշգրիտ թիրախաւորմանը:

ԱԱԾ միւս յայտարարութիւնը այն մասին էր, որ կառուցող տիրապետում է նախընտրական օպերատիւ իրավիճակին եւ թոյլ չի տայ ընտրական գործընթացի իրաւականութեան եւ օրինականութեան դէմ որեւէ գործողութիւն, խստագոյն կանխելով դրանք ու ենթարկելով օրէնքով սահմանուած պատասխանատուութեան:

Երկու միմեանց հետ առերեւոյթ կապ չունեցող յայտարարութիւնները կապ ունեն ընդհանուր այն իրավիճակի եւ միջոցառումի հետ, որ կայ յետպատերազմեան Հայաստանում, որը մեծ հաշուով պատերազմի եւ նախապատերազմական իրավիճակի շարունակութիւնն է:

Խօսքն այն մասին է, որ ԱԱԾ երկու յայտարարութիւնները իրենց տողատակում պարունակում կամ բացառատում են Հայաստանում պետական ինստիտուցիոնալութեան խորքային ճգնաժամը, որ գործնականում եղել է Հայաստանում արցախեան առաջին պատերազմից յետոյ: Այլապէս, ոչ միայն տարիներ շարունակ Հայաստանում չպէտք է կարողանային հանգիստ գործունէութիւն ծաւալել Ատրպէյճանի հաւաքագրած հայկական ազգանունով գործակալները ու լրտեսները, այլեւս չպէտք է լինէր ընտրական կեղծիքների չզիմելու զգուշացում ԱԱԾ մակարդակով, եւ ազգային անվտանգութեան ծառայութիւնն այս ընթացքում պէտք է զբաղուած լինէր բոլորովին այլ, լայն մասշտաբի գործերով ու խնդիրներով:

Բայց, ամբողջ հարցն այն է,

որ հայկական պետականութեան ինստիտուցիոնալ ողնաշարի փոխարէն, ձեւաւորուել է արցախեան առաջին յաղթանակից բխած այսպէս ասած ռազմա-հայրենասիրական բաժակաճառային ողնաշարը, որն էլ թելադրել է արդէն քաղաքական մտածողութիւն, վարքագիծ, պատկերացումներ, գործողութիւններ, եւ որի հետեւանքով էլ պետականութեան ինստիտուցիոնալ փոխարէն գարգացել է իշխանութեան ու պիզնեսի սերտաճման եւ քրէական բարքերի վրայ հիմնուած կոռուպցիոն համակարգը: Այդ համակարգն է, որ թոյլ չի տուել ամբարցնել յաղթանակած պետութեան ինքնիշխանութիւնը, ուղղակիօրէն վտանգի տակ դնելով յաղթանակի եւ պետութեան ճակատագիրը: Մեծ հաշուով, յետպատերազմեան շրջափուլում այդ համակարգը ձեռնմուխ է եղել պետականութեան դէմ ներքին ազդեցիկի, որի հետեւանքը պակաս ծանր չի լինելու, քան 44-օրեայ պատերազմի հետեւանքը:

Ներկայումս գնալ Հայաստանում ընտրակեղծարարութեան՝ ընտրակաշառքից մինչեւ քաղաքական խնդիրներն ուժով, նոյնիսկ գէնքով լուծելու պատրաստակամութեան մասին անգամ բացայայտ հնչող յայտարարութիւններ, նշանակում է գնալ ոչ պակաս պետական դաւաճանութեան, քան նրանք, ովքեր հաւաքագրուել են ռազմային Ատրպէյճանին:

Ատրպէյճանը, եւ 44-օրեայ պատերազմի ընթացքում, դրա հատեւանքով կողկասում ռուս-թուրքական կառավարում հաստատած սուբիեկտները անմիջական քաղաքական պրագմատիկ շահագրգռութիւն ունեն Հայաստանում նաեւ «ներքին» յաղողութեան հարցում: Որովհետեւ, Հայաստանում կառավարող համակարգի նախկին բնոյթի «ռեստավրացիան» ռեգիոնալ կառավարման նրանց մոտեցի բերեղացման առանցքային գործօն է: Այդ մոտեցի հաստատման եւ միջազգային քաղաքականութեան մակարդակում բերեղացման ճանապարհին հայկական անվտանգային ռազմական համակարգը պատերազմով քանդելուց յետոյ մնացել է միայն հայկական ժողովրդավարական, հանրայնօրէն լեգիտիմ համակարգի, իշխանութիւն ձեւաւորելու հանրային վստահութեան, աւանդույթի ձեւաւորման հեռանկարը կազմաքանդելը:

«ԵՐԵՒԱՆ ԼՈՒՐ»
Կայքէջ

**Երկարաժամկետ Եւ Հիմնարար
Լուծումների Միակ Երաշխիքը**

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՍ

Արցախի Հանրապետութեան կարգավիճակի հարցի քննարկումն անխուսափելի է, եւ այն պէտք է դիտարկուի հայատարայճանական խնդիրների համալիր լուծման համատեքստում: Պաքուն առաջարկում է երկու պետութեան միջեւ դեմարկացիան իրականացնել փոխադարձ սահմանները ճանաչելով: Հայաստանն արդարացիօրէն յայտարարում է, որ այդ խնդիրը կարող է լուծուել միայն Արցախի կարգավիճակի հարցի քննարկման հետ համալիր գործընթացների շրջանակներում: Ակնյայտ է, որ Ատրպէյճանի ներկայիս պահուածքը խնդրի լուծումը տանում է փակուղի, եւ երկու երկրի յարաբերութիւնները կարգաւորելու, տարածաշրջանային ենթակառուցումը քննարկելու մասին յայտարարութիւնները դատարկ խօսքերից այն կողմ չեն անցնելու: Այդ մասին են վկայում այս երկրի վերջին յայտարարութիւնները, որոնցով հերթական անգամ կրկնում են նախկինում հնչեցրած ապակառուցողական թեզերը: Այս անգամ էլ Ատրպէյճանը, գերիների եւ սահմանների հարցերով ԵԱՀԿ միջնորդութեանն արձագանքելով, յայտնեց, որ այդ կառուցող կարող է միայն օգնել Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան պայմանների կատարմանը: Սակայն բոլորին է յայտնի, որ այդ փաստաթղթում առկայ են միայն հրադարձի հաստատման եւ խաղաղապահների տեղակայման մասին դրոյթներ, այնտեղ չկայ որեւէ խօսք արցախեան հիմնախնդրի բաղադրական կարգաւորման մասին, որը երկարաժամկետ եւ հիմնարար լուծումների միակ երաշխիքն է: ՀՀ ԱԳՆ-ն մշտապէս ասել է, որ հակամարտութիւնը հեռու է կարգաւորուած լինելուց, եւ միայն խաղաղ բանակցութիւնների միջոցով է հնարաւոր հասնել համապարփակ քաղաքական կարգաւորման: Արդիւնաւէտ գործընթաց ապահովելու համար պէտք է հաշուի առնուեն Արցախի ժողովրդի իրաւունքները: Հայկական կողմը հաստատապէս մնում է այն դիրքորոշման, որ Արցախի կարգավիճակը պէտք է որոշուի տեղի բնակչութեան ինքնորոշուած տարածքների սահմաններում: Դրա համար առաջնային է ԵԱՀԿ Մինսկի խմբի բուն առաքելութեանը վերադառնալը, որտեղ դրուած են հիմնախնդրի կարգաւորման հիմ-

նական սկզբունքները: Այսօր Մինսկի խմբի համախաղաղ երկրներ հետ միասին ողջ աշխարհը կարծում է, որ շեշտը պէտք է դրուի Արցախի հիմնահարցի վերջնական, համապարփակ եւ կայուն կարգաւորման վրայ: ՀՀ սուվերեն սահմանները խախտելով, այլ սաղորիչ գործողութիւններ իրականացնելով՝ Պաքուն ոչ միայն հեռանում է հիմնահարցի հիմնարար կարգաւորումից, այլեւ առաջին հերթին արգելափակում է Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան դրոյթների կատարումը: Վերջինիս վարքը տրամագծօրէն հակասում է իր եւ «աւագ եղբօր»՝ Թուրքիայի՝ տարածաշրջանում փոխվստահութեան միջոցառում համագործակցութեան միջապայր ձեւաւորելու յայտարարութիւններին: Անդրկովկասում ստեղծելով նման լարուած իրավիճակ՝ Ատրպէյճանը հարցադրանի տակ է դնում նաեւ ենթակառուցում քննարկելու բացման հեռանկարը, ինչին այդքան ձգտում է թուրքիայի հետ միասին: Հետեւողականօրէն մերժելով միջազգային կառուցների միջնորդական ջանքերը՝ Ատրպէյճանը հարցականի տակ է դնում խնդրի կարգաւորումը: Միւս կողմից էլ այս իրավիճակի լարումը տարածաշրջանում մեծ խաղացողներին օրինաչափօրէն ստիպում է ներգրաւուել երկու երկրի միջեւ ընթացող գործընթացներին: Արդիւնքում Ատրպէյճանն Անդրկովկասը դարձնում է աշխարհաքաղաքական շահերի բախման կիզակէտ:

« ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ »

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱՍԿԵԱՍ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՍ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՍ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՂԵԱՍ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հարուած Հայաստանին. Նիկոլ Փաշինեանը Պետք է Խօսի

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԼԵԱՍ

Յունիսի 7-ին յայտնի դարձաւ Հայաստանի ԱԳՆ բոլոր փոխնախարարների հրաժարականի մասին: Փաստօրէն, Հայաստանի արտգործնախարարութիւնը ըստ էութեան չունի «վերադաս» շերտ, որովհետեւ հրաժարական է տուել նախարար Արա Այվազեանը, նրանից յետոյ հրաժարական էր ներկայացրել փոխնախարարներից մէկը, եւ անհայտ էլ միւս բոլոր փոխնախարարները: Ընդ որում, դիւանագիտական թիւ մէկ գերատեսչութեան հետ տեղի ունեցող ծաւալում է մի շրջանում, երբ հէնց թերեւս ամէնից շատ է

անհրաժեշտ դիւանագիտական խորքային եւ հետեւողական, յամառ աշխատանք, որպէսզի հնարաւոր լինի կանխարգելել կողկասում ձեւաւորուած իրողութիւնը ռուս-թուրքական ձեւաչափի մէջ այսպէս ասած կոնսերուացնելու գործընթացը, օգտագործելով այլ ուժային կենտրոնների հետաքրքրուածութիւնն ու առաւել եւս այդ հետաքրքրուածութիւնը հայկական իրաւունքներին եւ շահերին տիրոջ թուծ արտայայտելու հանգամանքը: Ըստ էութեան ստացում է իրավիճակ, երբ Հայաստանի ԱԳՆ ուղղակի «անջատուում է համակարգից»: Ի հարկէ, սա բոլորովին չի նշանակում,

որ կառուցող միայն նախարարն ու փոխնախարարներն են: Ի վերջոյ կան տարբեր բաժինների դեկավարներ, աշխատակիցներ, դեսպաններ եւ այլն, սակայն հասկանալի է, որ գործ ունենք քաղաքական իշխանութեան առանցքային, անգամ կիսաուժային կառուցի դեկավարման համակարգի հետ եւ անգամ հոգեբանական իմաստով ստեղծուած վիճակը հարուածելու է մնացեալ բոլոր աշխատակիցներին:

Հետեւաբար, այն, ինչ տեղի է ունենում ԱԳՆ հետ, կամ հարուած

ԼՈՒՐԵՐ

Կարելոր է ԱԺ-էն Ներս Ունենալ Արեւմտեան Եւ Եւրոպական Արժէքներ Կրող Որեւէ Քաղաքական Ուժ. Արամ Սարգսեան

Նախընտրական քարոզարշաւի 2-րդ օրը «Հանրապետութիւն» կուսակցութիւնը էջմիածին քաղաքէն սկսաւ հանդիպումները:

Կուսակցութեան վարչապետի թեկնածու, նախկին վարչապետ՝ Արամ Սարգսեան համոզուած է, որ յաղթելու համար ունին բոլոր հնարաւորութիւնները թէ՛ անցած ճանապարհով, թէ՛ ունեցած հետագիծով, արմատներով ու ազգանունով:

«Բացարձակ անհրաժեշտ է ցանկացած պարագայում Ազգային ժողովում ունենալ արեւմտեան, եւրոպական արժէքներ կրող որեւէ քաղաքական ուժ, որովհետեւ միայն ուսուսական շահը պաշտպանող քաղաքական ուժերի ներկայութիւնը ցանկացած իշխանութեան համար, նոյնիսկ ամենաուսուսականի համար ձեռնտու է, որովհետեւ ինքը բանակցելու, հաւասարակշռելու տեղ չունի», - նշեց Արամ Սարգսեան:

«Հանրապետութիւն» կուսակցութիւնը կը համարէ, որ Հայաստանի անվտանգութիւնը ամրացնելու համար պէտք է համագործակցել ԵԱՀԿ Մինսքի խումբի անդամ երկիրներու հետ, իսկ հայատարալէճանական սահմանին ստեղծուած բարդ իրավիճակի հանգուցալուծման համար պէտք է դիմել ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդին: Գերիներու, սահմաններու խախտման եւ տարանցիկ ճանապարհներու խնդիրը պէտք է լուծուի ո՛չ թէ Հայաստան-Ատրպէյճան-Ռուսաստան ձեւաչափով, այլ ՄԱԿ-ի մէջ:

Ինչ կը վերաբերէ Արցախին, ապա, Արամ Սարգսեանի խօսքով, քանի դեռ Մինսքի խումբի երեք անդամ երկիրները՝ Ֆրանսան, ԱՄՆ-ը ու Ռուսաստանը կ'ըսեն, որ Արցախի կարգավիճակը լուծուած է, պէտք է օգտուիլ այդ առաւելու-



«Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար՝ Արամ Սարգսեան

թեւէն. - «Երեք եռանախագահողի հետ էլ պէտք է քրտնաջան աշխատենք: Պիտի աւելին աշխատենք նաեւ Ռուսաստանի հետ, Ռուսաստանի ուղղութեամբ աշխատենք նաեւ այլ երկրների միջոցով Ռուսաստանի բարեկամ, ասենք՝ Չինաստանով, Հնդկաստանով, Սիրիայով պիտի փորձենք աշխատել: Բայց ես հասկանում եմ նաեւ, որ Ռուսաստանին էլ Մինսքի խումբը անհրաժեշտ է, որովհետեւ դա միակ հարթակն է, որտեղ ինքը Եւրոպայի ու ԱՄՆ-ի հետ յատակ շփման հնարաւորութիւններ ունի, եւ միակ հարթակն է, որտեղ կարող է Ատրպէյճանի ու Թուրքիայի հետ առեւտուր անել: Հակառակ պարագաներում էդ առեւտրի հնարաւորութիւնը ամբողջութեամբ էս պատերազմով կորսուեց: Իսկ մեր հետ առեւտուր անելու ոչինչ չկայ: Եթէ մենք ՄԱԿ չենք դիմում, մենք դառնում ենք Ռուսաստանի գրպանը դրուած, եւ մեր անկախութիւնը թողած մի կողմ, մեր հետ բոլորը սկսում են շփուել Ռուսաստանի միջոցով»:

Ղարաբաղի Հարցով Հայաստանը Դաշնակից Չունի. ՀՀ Առաջին Նախագահ



Լեւոն Տէր Պետրոսեան ՀԱԿ նախընտրական ծրագիրը ներկայացնելու ժամանակ

Մեր ազգի մեծամասնութիւնը եւ բոլոր քաղաքական կուսակցութիւններու մեծամասնութիւնը դեռ չեն հասկցած այն ճշմարտութիւնը, որ Ղարաբաղի հարցով Հայաստանը դաշնակից չունի: Այս մասին ՀԱԿ նախընտրական ծրագիրը ներկայացնելու ժամանակ ըսաւ ՀՀ առաջին նախագահ, կուսակցութեան վարչապետի թեկնածու Լեւոն Տէր Պետրոսեան:

«Հիմա դեռ կրկնում են՝ դէ ոչինչ, եթէ Ռուսաստանը չէ գործակիցը, ԱՄՆ-ն կը լինի, Իրանը կը լինի: Սա նշանակում է, որ ոչ թէ հին պատմութեան, այլ մեր օրերի, վերջին երեք տասնեակ տարիների դառը փորձից չենք ուզում դասեր քաղել, բացարձակապէս: Մենք մի անգամ սխալուել ենք 100 տարի առաջ, անցել է 70 տարուայ այդ սովետական շրջանը,

Ղարաբաղեան շարժումը 90-ական թուականներին լրջագոյն դասեր էր քաղել պատմութիւնից, եւ մենք ստեղծեցինք պետութիւն, տարանք յաղթանակներ»:

Լեւոն Տէր Պետրոսեանի խօսքով՝ եթէ սերունդի մը ընթացքին կրկնենք նոյն սխալը, ինչանք նոյն անդունդը, կը դառնանք աշխարհի համար խղճահարութեան արժանի ազգ. «Կ'ընկնենք Սոմալիի, Եմենի օրը, ուզո՞ւմ ենք այդ երկրների շարքին դասուել»:

Տէր Պետրոսեանը իր կուսակիցներուն կողմէ վարելու հանգիստ սառնասիրտ քարոզչութիւն. «Երեք բանակուռի մէջ չմտնէք ընդդիմախօսների հետ: Ինչ կ'ուզի՝ անեն, թող իրենց ցոյց տան: Ձեր փաստարկները այնքան հզօր են, որ բացարձակապէս կարիք չունէք նման բանակուռի մէջ մտնելու»:

Նախկին Զինուորականն Ու Կամաւորական Ձոկատի Հրամանատարը Գործած Են Պետական Դաւաճանութիւն

Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը (ԱԱԾ) կազմակերպուած խումբի կողմէ պետական դաւաճանութեան դէպք բացայտած է. այդ խումբի անդամներէն երկուքը ինքնախոստովանական ցուցմունքներ տուած են:

Ըստ ԱԱԾ-ին՝ խումբի գործողութիւններու հետեւանքով «հականօրէն խաթարուել է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան եւ Արցախի պաշտպանութեան բանակի մարտունակութիւնը, խոչընդոտուել է մարտական խնդիրների հետագայ իրագործումը, ստեղծուել են նպաստաւոր պայմաններ թշնամական զօրքի կողմից հարաւային ուղղութիւնում պաշտպանութեան գծի ճեղքման եւ դէպի Արցախի խորքը հետագայ առաջխաղացման համար»:

Ազգային անվտանգութեան ծառայութիւնը մանրամասնած է՝ մարտական մետալներով պարգեւատրուած նախկին զինուորականը Հայաստանի քաղաքացիութիւն ունեցող մէկ այլ անձի հետ Թուրքիոյ մէջ ընդունած են Ատրպէյճանի յատուկ ծառայութիւններու առաջարկը՝ նիւթական օգուտներ ստանալու դիմաց հաւաքագրելու եւ ի


վնաս Հայաստանի տարածքային ամբողջականութեան եւ արտաքին անվտանգութեան գործելու:

2020-ի Սեպտեմբերին սկսած պատերազմի ընթացքին, կազմակերպուած խումբի անդամներէն մէկը, որպէս կամաւորական ջոկատի հրամանատար մարտական գործողութիւններուն մասնակցելու պատրուակով մեկնած է Հաղրութի ինքնապաշտպանական շրջան եւ մինչ Հոկտեմբերի վերջը շարունակած է տեղեկութիւններ հաւաքել ու ատրպէյճանցիներուն փոխանցել:

Այս գործողութիւնները, ԱԱԾ-ի հաղորդագրութեան համաձայն, ատրպէյճանական կողմին հնարաւորութիւն տուած են տեղորոշել յատուկ կարեւորութիւն ունեցող սպառազինութեան եւ սարքերու գտնուելու վայրերն ու անվրէպ խոցումներ կատարել, շարքէն հանել հայկական բանակային միաւորումները եւ կենդանի ուժը:

Կազմակերպուած խումբի անդամներէն երկուքը ներգրաւուած են, որպէս մեղադրեալ, ինքնախոստովանական ցուցմունքներ տուած են, անոնց նկատմամբ խափանման միջոց ընտրուած է կալանաւորումը:

Սիւնիքը Մերժեց Քոչարեանին Հակառակ Համայնքապետերու Բոլոր Ձանքերուն



Կապանի մէջ Քոչարեանի հանրահաւաք սակաւաթիւ մասնակիցներով

Յունիս 7-ին, Կապանի մէջ Քոչարեանի հանրահաւաքը նաեւ անցած է բաւական սակաւաթիւ մասնակիցներով, յատկապէս, եթէ հաշուի առնենք, որ Կապանի քաղաքապետը, կը սատարէ «Հայաստան» դաշինքին:

Եւ այս այն պարագային, երբ Քոչարեանի ցուցակին վրայ հանգրուանած Սիւնիքի համայնքապետերը վարչական լծակներ ունին, իսկ վահէ Յակոբեանն ալ Չանգեղուրի պղնձամոլիպտենային սեփականա-

տէրերէն է եւ աշխատակիցներուն վրայ լծակներ ունի:

Սիւնիքի մէջ տեղի ունեցածը սիւնեցիներու պատասխանն է Քոչարեանին՝ Փաշինեանի դէմ հայհոյանքներով հաւաքներ եւ խուլիկանութիւն կազմակերպելուն համար: Գորիսի հանրահաւաքին եւս քիչ մարդ ներկայ եղած է:

Այսպիսով Քոչարեանը Սիւնիքին մէջ կատարեալ անյաջողութիւն ապրած է, չնայած որ կ'ակնկալէր հզօր մեկնարկ:

ԼՈՒՐԵՐ

Մոսկուայի Մեջ Վերսկսած են Բանակցութիւնները Հայաստանի, Ատրպէյճանի ու Ռուսաստանի Միջեւ

ՀՀ Պաշտպանութեան նախարարութիւնը հաստատած է, թէ Մոսկուայի մէջ վերսկսած են բանակցութիւնները Ռուսաստանի, Ատրպէյճանի ու Հայաստանի ներկայացուցիչներու միջեւ: Եռակողմ այս շփումները պիտի ըլլան շարունակական, նշած են այս գերատեսչութեան չմանրամասնելով հանդիպման յատակ օրակարգն ու մասնակիցները:

Ռուսաստանեան ԹԱՍՍ լրատուական գործակալութիւնը տեղեկութիւն տարածած էր, որ Յունիս 2-ին Մոսկուայի մէջ եռակողմ հանդիպում եղած է հայ-ատրպէյճանական սահմանին լարուածութեան թուլացման ուղիներու վերաբերեալ քննարկմամբ: Ըստ հայաստանեան մամուլին՝ հանդիպման առանցքին եղած է նաեւ 8 օր առաջ հայկական տարածքէն գերեվարուած 6 հայ զինծառայողներու վերադարձի հարցը:

Ինչպէ՞ս աւարտած են բանակցութիւնները, արդեօք յայտնի է յաջորդ հանդիպման ժամկետը, պաշտպանական գերատեսչութիւնը մանրամասնութիւններ չի փոխանցեր, հեռաձայններուն չեն արձագանգեր վարչապետի պաշտօնակատարի մամուլ խօսակարգի եւ Գլխաւոր շտապի տեղեկատուութեան բաժնի ղեկավարը: Ըստ տարբեր աղբիւրներու՝ այս հանդիպման մասնակցած են ռուս խա-

ղաղապահ գործառնութիւն հրամանատար՝ Մուրատովը եւ Հայաստանի գլխաւոր շտապի պետի տեղակալը:

Արդէն 23 օր է, որ ատրպէյճանական գործերը ներխուժած են հայկական տարածքներ՝ քիլոմետրերով խորացած Գեղարքունիքի ու Սիւնիքի մարզերու ուղղութեամբ, ատրպէյճանական կրակահերթէն մէկ հայ զինծառայող սպանուած է, 6-ը գերեվարուած են: Սահմանին պարբերաբար հայ ու ատրպէյճանցի զինծառայողներու միջեւ ձեռնամարտեր, ծեծկռտուքներ տեղի կ'ունենան, վերջինը երէկ առաւօտեան էր՝ Գեղարքունիքի մարզ: Հրագին չէ կիրառուած, տեղեկացուցած են պաշտպանութեան նախարարութեան: Երկու հայ զինծառայողներ թեթեւ մարմնական վնասուածք ստացած են:

Մարզի գիւղերուն մէջ արդէն սովորութիւն եղած է ատրպէյճանական վրաններու գոյութիւնը արօտավայրերը եւ իրենց բարձունքները: Կուտ համայնքի ղեկավար՝ Սիմա Չիթչեան ըսած է, որ ատրպէյճանցիները անխախտ այնտեղ են. «Նոյն տեղերում կանգնած են, նոյն դիրքերում, օրը 30 անգամ տեղանք ենք նայում հեռադիտակով, դէ անգին աչքով հեռուի մէջ լաւ չեն երեւում, բայց հեռադիտակով նայում ենք՝ իրենց նոյն տեղերը, իրենց վրանները, զինուորները»:

ԱԳՆ-ի Երեք Տեղակալները Ազատուեցան Իրենց Պաշտօններէն

Արտաքին գործոց նախարարի տեղակալներ՝ Աւետ Ադոնցը, Արտակ Ապիտոնեանը եւ Գագիկ Ղալաչեանը Նիկոլ ֆաշինեանի արձակուրդի մէջ գտնուելու ընթացքին գինք փոխարինող փոխվարչապետի պաշտօնակատար՝ Տիգրան Աւինեանի աջօրուայ՝ Յունիս 8-ի որոշումներով ազատուած են գրաւած պաշտօններէն, այս մասին տեղեկացանք Հայաստանի կառավարութեան որոշումներու պաշտօնական կայքէջէն:

Եթէ Գագիկ Ղալաչեան հրաժարականի դիմում ներկայացուցած էր դեռ Մայիս 27-ին, ապա երէկ յայտարարուեցաւ, որ Աւետ Ադոնցը, Արտակ Ապիտոնեանը եւ չորրորդ փոխնախարար Արմէն Ղեւոնդեանը աշխատանքէն ազատման դիմումներ ներկայացուցած են եւ անցեալ շաբաթ համապատասխան միջնորդագրիւններով ուղարկած վարչապետի աշխատակազմ:

Աշխատանքէն ազատուած երեք փոխնախարարներէն կապուեցանք Գագիկ Ղալաչեանի հետ, սակայն ան հրաժարեցաւ պատասխանել հարցերուն, անոնց կարգին՝ իր հրաժարականի պատճառի վերաբերեալ հարցին. «Ես խնդրում եմ բոլոր մեկնաբանութիւնների համար լրատուական դիմէք էլի: Ոչ մի բան չունեմ ասելու Ձեզ»:

Հրաժարական ներկայացուցած արտաքին գործոց նախարարի բոլոր չորս տեղակալներէն միայն Արմէն Ղեւոնդեանի հրաժարականը չէ ընդունուած, եւ փաստօրէն, ի պաշտօնէ ան պէտք է շարունակէ ղեկավարել հանրապետութեան համար կարեւոր գերատեսչութիւնը:

Արտաքին քաղաքական գերատեսչութեան ներս հրաժարականներու շարքը սկսաւ Մայիս 27-ին, երբ աշխատանքէն ազատման դիմում ներկայացուց արտաքին գործոց նախարարի պաշտօնակատար՝ Արա Այվազեանը՝ պաշտօնավարելով կէս տարիէն քիչ մը աւելի: Ընդ որում, չորս օր անց Արտաքին գործոց նախարարութեան անձնակազմի հետ հրաժեշտի հանդիպման ժամանակ Այվազեանը ուշագրաւ յայտարարութիւն ըրաւ՝ իր հրաժարականի պատճառին վերաբերեալ. «Իմ հրաժարականի որոշումը պայմանաւորուած էր հենց այդ պատճառով, որպէսզի երբեք չորեք կասկած չլինի, որ այս նախարարութիւնը կարող է ինչ-որ քայլ անել կամ համաձայնութիւն տալ ինչ-որ գաղափարների, նախաձեռնութիւնների, որոնք մեր պետականութեան, մեր ազգային եւ պետական շահերի դէմ են եղել»:

ՀԱՊԿ-ը Հայաստանի Մեջ Զօրավարժութիւն Կը Կատարէ



Ռուսական պետական «Սփութնիք» գործակալութիւնը, յղում ընելով ՀԱՊԿ (Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութիւն) մամուլ քարտուղարին, Յունիս 3-ին հաղորդեց, որ «Ամպրոպ-2021» յատուկ զորավարժութիւնը կը կատարուի Հայաստանի մէջ: «Զօրավարժութիւններու ընթացքին երկու փուլով գործնական գործողութիւններ պիտի մշակուին գրահատեսակներու, յատուկ մեքենաներու, օդուժի, անօդաչու թռչող սարքերու եւ որոնող շուններու կիրառմամբ», - ըսած է ան, տեղեկացնելով նաեւ, որ Յունիս 1-3-ին Հայաստանի մէջ շտապային բանակցութիւններ կատարուած են վարժանքները նախապատրաստելու համար, որոնք ՀԱՊԿ արագ արձագանգման հաւաքական ուժերու յատուկ նշանակութեան ուժերու ձեւաւորում կը նախատեսեն:

Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան մէջ կը մտնեն Հայաստանը, Պելառուսիան, Ղազախիստանը, Խրիւզիստանը, Ռուսաստանն ու Տաճիկիստանը:

Քաղաքական մեկնաբան՝ Յակոբ Բաղալեանի կարծիքով՝ եթէ այս զորավարժութիւնները ի պատասխան Հայաստանի դիմումի դիտարկուին, ապա այն բաւարար լուրջ քայլ չէ:

«Լարուածութեան աստիճանի, բնոյթի հետ համեմատութեամբ՝ սա բացարձակ համարժէք արձագանգ չէ, որովհետեւ մենք գործունեք փաստացի ՀԱՊԿ անդամ պետութեան, այսինքն՝ նաեւ ՀԱՊԿ պատասխանատուութեան գոտու սահմանախախտման հետ, եւ այդ սահմանախախտումը, մեղմ ասած, վերացուած չէ, այլ երկրի զինուած ուժեր կանգնած են այդ սահմանին, եւ այս պարագայում ՀԱՊԿ-ից, անկասկած, աւելի լուրջ եւ առարկայական, գոնէ քաղաքական մակարդակի արձագանգ էր պահանջուած», - շեշտեց Բաղալեան:

Facebook-ի Հայկական Տիրոջին Մեջ Ապատեղեկատուութիւնը Կը Ստուգուի Ու Կը Պիտակաւորուի

Դիմատետրի (Facebook) հայկական տիրոջին մէջ, նախընտրական քարոզարշաւին ընդառաջ գանգուածօրէն տարածուող ապատեղեկատուութիւնները արդէն կը ստուգուին ու կը պիտակաւորուին՝ հիմնականին «սխալ» կամ «խեղաթիւրուած» նշումներով: Ծրագիրը առայժմ ժամանակաւոր է: Ապատեղեկատուութեան տարածումը կանխելու նպատակով փաստեր ստուգող լրագրողներու հայկական կազմը վրացի գործընկերներու հետ միասին երկու ամիս խոշորացոյցի տակ պիտի պահէ նաեւ ինտակրամը:



Քական գործիչ եւ ես տարածելու եմ ապատեղեկատուութիւն, եւ դուք չէք կարող ինձ հետ ոչ մի բան անել, որովհետեւ ես քաղաքական գործիչ եմ»:

Նախընտրական, ընտրական ու յետընտրական շրջանին փաստերու ստուգման ծրագրի օգնութեամբ Դիմատետրի հայաստանեան բաժնին մէջ կը նուազի ապատեղեկատուութեան տարածումը, կը կարծէ ծրագրին միտաբան Media.am կայքի խմբագիր՝ Գեղամ Վարդանեան:

«Ապացուցուած ապատեղեկատուութիւնը աւելի քիչ կը հասնի Դիմատետրեան օգտատէրերին, եւ էդ է մեքենականութիւնը: Էնպէս չի, որ ամբողջ աշխարհում ընկերային մեծ ցանցերի գործողութիւններից խմբագիրները, լրագրողները շատ գոհ են, միշտ աւելին ենք պահանջում մենք, միշտ աւելի շատ գործողութիւններ ենք պահանջում: Բայց էս պահին էդ էն է, ինչ ընկերային ցանցը իր կողմից կարող է անել խաղի կանոնները կարգաւորելու համար», - «Ապատուութիւն»ի հետ զրոյցին ըսաւ Վարդանեան:

«Մի քանի սահմանափակում կայ՝ առաջինը՝ էն, որ տարածումն է քչանում, եւ երկրորդը՝ որ կարող է արգելուել գովազդ դնել», - նշեց կարինէ Ղազարեան:

Media.am-ի փաստեր ստուգող լրագրող՝ Կարինէ Ղազարեան «Ապատուութիւն»ի հետ զրոյցի ընթացքին ըսաւ. - «Ինչ-որ մի էջ գրառում է արել, միւս էջը կ'իստուէլ է էդ գրառումով, լրատուամիջոցը տարել իր մօտ դրել է, բերել Դիմատետրում կ'իստուէլ է... Մենք կարող ենք գրեթէ բոլոր այդ գրառումների յետեւից գնալ եւ համապատասխան նշում թողնել, որպէսզի նախ կանխենք հետագայ տարածումը, որպէսզի յաջորդ անգամ որ օգտատէրերը ուզենան դա տարածեն, տեսնեն, որ սա, այս տեղեկութեան հետ խնդիր կայ»:

Զգուշացնող նշում միայն քաղաքական գործիչներու գրառումներու ու տարածած տեղեկութիւններու վրայ չի յայտնուիր՝ Դիմատետրի պահանջն է: «Քաղաքական խօսքի ազատութիւնը որեւէ կերպ չի ուզում սահմանափակել», - պարզաբանեց Կարինէ Ղազարեանը՝ աւելցնելով. - «Ի հարկէ, սա չի նշանակում, որ ինչ-որ մի մարդ կարող է ասել՝ «գիտէ՞ք, ես այսօրուանից ինձ համարում եմ քաղա-

Ինչպես Պիտի Ձեւաւորուի Ապագայ Կառավարութիւնը Եւ Որքան Քուէ Պէտք Է Խորհրդարան Մտնելու Համար

Յունիս 20-ին կայանալիք արտահերթ խորհրդարանական ընտրութիւններու քարոզարշաւը այսօր՝ Յունիս 7-ին պաշտօնապէս սկիզբ առաւ: Անիկա պիտի տեւէ մինչեւ Յունիս 18-ը ներառեալ: Ընտրութիւններուն մասնակցելու համար յայտ ներկայացուցած է 26 ուժ՝ 22 կուսակցութիւն եւ 4 դաշինք:

Չնայած Աժ-ն ընդունեց Ընտրական նոր օրէնսգիրք, սակայն անոր դրոյթներէն հիմնականները ուժի մէջ կը մտնեն այս ընտրութիւններէն յետոյ: Կատարուած փոփոխութիւններէն ուժի մէջ մտած է վարկանշային ընտրակարգի վերացումը եւ քաղաքացիները արդէն այս ընտրութիւններէն սկսեալ, պիտի քուէարկեն բացառապէս կուսակցութիւններու դաշինքներու օգտին: Փոփոխութիւններ կատարուած են նաեւ ՀՀ Քրէական օրէնսգրքին մէջ. աւելցած են հետեւեալ յօդուածները՝ քուէաթերթիկը դուրս հանել ընտրատեղամասէն - քր. պատիժ 5 տարուայ ազատազրկում, ընտրակաշառք տալ - 7 տարուայ ազատազրկում, ընտրակաշառք վերցնել -3 տարուայ ազատազրկում:

Կուսակցութիւններու եւ կուսակցութիւններու դաշինքներուն համար, Աժ անցողիկ շեմ կը մնայ հինը՝ կուսակցութիւններուն համար անցողիկ կը համարուի 5%-ը, իսկ դաշինքներու համար՝ 7: Եթէ ուժերէն մէկը կը ստանայ ընտրութիւններուն մասնակցած քաղաքացիներուն 51% եւ աւելի քուէներ, ապա կ'ընտրէ վարչապետ, կը ձեւաւորէ Կառավարութիւն: Սակայն, եթէ որեւէ ուժ չի հաւաքեր անհրաժեշտ՝ 51% եւ աւելի քուէն, ապա կուսակցութիւններուն կամ կուսակցութիւններու դաշինքներուն ԿԸՅ-ն (Կեդրոնական ընտրական յանձնաժողով) կու տայ վեց օր ժամանակ, որպէսզի ուժերը կարողանան ձեւաւորուիլ:

Քարոզարշաւի Առաջին Օրը

Շարունակուած էջ 1-էն

նախագահ՝ Սերժ Սարգսեանի այն յայտարարութեան, թէ եթէ ինքը ըլլար գերագոյն գլխաւոր հրամանատար ու երկրին մէջ այսպիսի իրավիճակ ըլլար, ապա ինքն իրեն կը գնդակահարէր: «Նախարար էիր, ազգային անվտանգութեան նախարար, երկրի Ազգային ժողովի նախագահին, վարչապետին գնդակահարեցին, բա դրանից յետոյ քեզ ինչի՞ չզցցեցին պատուհանից, կարո՞ղ է նրա համար, որ քո ղեկավարած կառույցն առնուազն լաւ էլ տեղեակ էր, որ նման բան է տեղի ունենում եւ որեւէ քայլ չէր ձեռնարկում երկրի անվտանգութիւնն ապահովելու համար, իսկ դա կարո՞ղ է նրա համար, որ վազգէն Սարգսեանն ու Կարէն Դեմիրճեանը դէմ էին կանգնել Մեղրին Ատրպէյճանին յանձնելու ծրագրին», - նշեց Փաշինեան: Նիկոլ Փաշինեան յայտնեց նաեւ, որ 44-օրեայ պատերազմի հետեւանքով պաշտօնապէս հաստատուած զոհերու թիւը 3700 է, բայց ինչո՞ւ բոլորը կը շարունակեն ըսել 5000: Քարոզարշաւի երկրորդ օրը Արագածոտնի մարզի թալին քա-

ղանան ձեւաւորել դաշինք եւ ԿԸՅ-ին ներկայացնեն վարչապետի իրենց թեկնածուն: Ընդ որում, դաշինք կրնայ ձեւաւորուիլ ոչ աւելի, քան 3 քաղաքական ուժի միջեւ:

Դաշինք ձեւաւորուելէն յետոյ կը ձեւաւորուի դաշնային կառավարութիւն, եւ կ'ընտրուի վարչապետ:

Եթէ ուժերը չյաջողեցան ձեւաւորել դաշինք, ապա տեղի կ'ունենայ ընտրութիւններու երկրորդ փուլ: Անոր կը մասնակցին առաջին փուլին առաջին եւ երկրորդ տեղը զբաւած քաղաքական ուժերը եւ անոնցմէ որ մէկը, որ աւելի շատ ձայն հաւաքեց, այդ ուժին կը տրուի լրացուցիչ ձայնքան մաստաթ, որպէսզի այդ ուժը ունենայ 54%:

Այն քաղաքացիները, որոնք զբանցուած են բնակավայր մը, սակայն փաստացի կը բնակին այլ բնակավայր, կրնան իրենց փաստացի գտնուելու վայրի Անձնագրային սեղանին դիմում գրել, խնդրելով իրենց անունը ներառել փաստացի բնակութեան վայրի ընտրատեղամասին ցուցակին մէջ: Դիմումի ներկայացման վերջնաժամկէտն է Յունիս 10-ի ժամը 14:00-ը:

Ընդունուած փոփոխութիւններու համաձայն, այս ընտրութիւններուն ընտրողը քուարկելու ատեն պէտք պիտի չունենայ գրիչի:

Քուէաթերթիկին վրայ որեւէ նշում ընելու անհրաժեշտութիւն չկայ: Բաւական է միայն ընտրել այն կուսակցութեան կամ կուսակցութիւններու դաշինքի անունով քուէաթերթիկը, որուն կը ցանկայ քուէարկել եւ տեղադրելով զայն ծրարին մէջ, ձգել ընտրատուփին մէջ:

Քուէարկութիւնը կ'աւարտի Յունիս 20-ին, երեկոյեան ժամը 20:00-ին:

Անկէ յետոյ պարզ կը դառնայ՝ 2-րդ փուլ պիտի ըլլայ, թէ՞ ոչ: **ՎՈՎԱ ՅԱԿՈՒԲԵԱՆ**
«Civic.am»

Աւարտեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Այցը Արցախ



Կաթողիկոսը մուտք կը գործէ Ստեփանակերտի Սուրբ Աստուածածին տաճար. կողքին ԴԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակեան

Յունիս 6-ին՝ Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի տօնին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Մայրապոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ, Ստեփանակերտի Սուրբ Աստուածածին առաջնորդանիստ տաճարը մատուցուեցաւ Սուրբ եւ Անմահ Պատարագ: Այս առիթով եկեղեցու մէջ հաւատացեալներու խոնարհումի եւ օրհնութեան համար դրուած էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն բերուած Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի մատուցները, որպէսզի զօրանան հաւատքով ու լատեսութեամբ իրենց նոր կեանքը կերտելու ճանապարհին:

Տաճարին առջեւ, Ամենայն Հայոց Հայրապետը դիմաւորեց եկեղեցականներու թափորը: «Հրաշափառի» երգեցողութեան ներքոյ Վեհափառ Հայրապետը, օրհնելով ներկայ բարեպաշտ ժողովուրդը, առաջնորդուեցաւ դէպի խորան, ուր երկրպագութենէն յետոյ սկսաւ Պատարագի սրբազան արարողութիւնը:

Պատարագին էր Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը: Սուրբ Պատարագի արարողութեան ներկայ էին պետական աւագանին՝ գլխաւորութեամբ Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանի, Արցախի վաստակեալ նախագահներ՝ Արկաղի Դուկասեանը եւ Բակօ Սահակեանը, ՀԲԸՄ նախագահ Պերճ Սեդրակեանի պատուիրակութիւնը, թեմի եկեղեցականներ, գինձառաջողներ եւ հաւատաւոր բազում արցախցիներ:

Պատարագի արարողութեան աւարտին, հանդիսապետութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարուեցաւ Հանրապետական մարթանքի արարողութիւն Արցախի խաղաղութեան եւ անվտանգութեան, հաւատաւոր ժողովուրդի՝

ապահով եւ բարօր կեանքի համար: Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցը Արցախ ողջունեց թեմակալ առաջնորդ Վրթանէս եպիսկոպոսը՝ ընդգծելով, որ պատմական օրեր կ'ապրի Արցախը, քանզի Ամենայն Հայոց Կաթողիկոսը Արարատեան շաբաթն ու Սուրբ Էջմիածնի տօնը կ'անցընէ Սիւնիքի եւ Արցախի իր զաւակներուն հետ: Սրբազանը նկատել տուաւ, որ առկայ դժուարին պայմաններուն Հայոց Հայրապետի այցը մեծ միթթարութիւն էր եւ քաջալերանք արցախցիներուն համար:

Սրբազանի ողջոյնի խօսքէն յետոյ, ներկաներուն իր օրհնութիւնն ու պատգամը տուաւ Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետը: «Տիրոջ ողորմածութեամբ համախմբուել ենք Ստեփանակերտի Սուրբ Աստուածածին եկեղեցում մեր միասնական աղօթքը վերառաքելու առ Աստուած, որ Տէրը մեզ ուժն ու զօրութիւնը տայ յաղթահարելու պատերազմի արհաւիրքները, վեր ելնելու վշտերի ու տառապանքների ծանր շրջանից եւ վերաւոր մեր կեանքը նորոգելու տէրունական օգնութեամբ: Համախմբուել ենք աղօթելու Հայաստան եւ Արցախ մեր աշխարհի խաղաղ ու ապահով կեանքի, հայրենի մեր պետութեանց զօրացման ու բարօրութեան համար, ռազմի դաշտում անմահացած մեր հերոսների, խաղաղ բնակչութեան շրջանում մեր ունեցած զոհերի, պատերազմի ընթացքում վիրաւորուածների, անյայտ կորածների, գերեզմարտուած մեր զաւակների համար», - նշեց Նորին Սրբութիւնը: Արցախ այցելութեան ընթացքին Վեհափառ Հայրապետը պաշտօնական հանդիպում ունեցաւ նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանի հետ եւ այցելեց Ամարաս ու Գանձասար վանական համալիրներ:

Հայաստան Ամենաշատ Սպառազինութիւն

Շարունակուած էջ 1-էն

հրթիռային համալիրները՝ 300 քիլոմէթր հեռահարութեամբ, որոնցմէ առնուազն մէկը Հայաստան կիրառած է 44-օրեայ պատերազմի ժամանակ: 2016-2017 թուականներուն Ռուսաստանը մատակարարած է համազարկային կրակի «Սմերչ» համակարգեր, որոնք նոյնպէս կիրառուած են 44-օրեայ պատերազմի ընթացքին: 2019 թուականին Ռուսաստանէն ժամանած են չորս կործանիչներ, որոնք, սակայն, ըստ SIPRI-ի, չեն կիրառ-

ուած 44-օրեայ պատերազմի ժամանակ: Պատճառը չէ նշուած: Նոյն ժամանակահատուածին Քրեմլինը Ատրպէյճանին մատակարարած է հետեւակի մարտական մեքենաներ, հրասայլեր, հակաօդային պաշտպանութեան միջոցներ, փոխադրային եւ հարուածային ուղղաթիւներ, համազարկային կրակի ինքնամուղ համակարգեր, հրետանի: Բոլոր այս զինատեսակները, SIPRI-ի հետազոտողներու պնդմամբ, կիրառուած են հայկական ուժերու դէմ 44-օրեայ պատերազմի ընթացքին:

Չկատարուած Խոստումներից Մինչև Արտագաղթի Միակ Պատկեր. Քոչարեանի Յայտարարութեան Հետքերով


Հայաստանի երկրորդ նախագահ, «Հայրենիք» դաշինքի վարչապետի թեկնածու Ռոբերտ Քոչարեանը վերջին ժամանակներում ակտիվորէն հարցազրոյցներ եւ ելոյթներ է ունենում մարզային նախընտրական հանդիպումների ժամանակ: Դրանց շրջանակում Քոչարեանը հանդէս է եկել մի շարք խնդրայարոյց յայտարարութիւններով:

Այսպէս, Մայիսի 29-ին վանաձորում քաղաքացիների հետ հանդիպման ընթացքում երկրորդ նախագահը, խօսելով արտագաղթի մասին, յայտարարել է, որ միայն իր նախագահութեան 3 տարիների ընթացքում է Հայաստանում գրանցուել միգրացիոն դրական ցուցանիշ:

«Հասկանում էք... էս 3 տարին՝ 2005, 2006, 2007, միակ տարիներն էին՝ Հայաստանի անկախութիւնը ձեռք բերելուց յետոյ, երբ մենք ունեցել ենք դրական միգրացիոն սալդոյ: Աւելի շատ մարդիկ գալիս էին Հայաստան, քան գնում էին Հայաստանից: Հիմա պէտք է այդ ամէնը դուբլ անենք, պէտք է կրկնենք:», - յայտարարել է Քոչարեանը:

Քոչարեանն առաջին անգամ չէ, որ նման յայտարարութեամբ է հանդէս գալիս: «Փաստերի Ստուգման Հարթակը» պարզել էր, որ հնչեցուած միտքը, թէ միայն Քոչարեանի նախագահութեան օրոք է յաջողուել միգրացիոն դրական սալդոյ ապահովել, սխալ է, քանի որ Նիկոլ Փաշինեանի վարչապետութեան երեք տարիներին էլ ժամանողները մշտապէս գերազանցել են մեկնողներին, եւ արձանագրուել է միգրացիայի դրական ցուցանիշ:


Միգրացիան Հայաստանում Անկախութեան Տարիներին



Գնաճը եւ Աշխատավարձերը Յետ Յեղափոխական Հայաստանում

Մայիսի 31-ին Քոչարեանն Արարատի մարզում ընտրողների հետ հանդիպմանը, անդրադառնալով գնաճի թեմային, միտք էր յայտնել, որ յեղափոխութիւնից յետոյ աշխատավարձերի բարձրացումը իրականում ինդեքսացիայ է եւ նոյնիսկ չի փակում գնաճը՝ կազմելով դրա կէսի կէսը:

«Եթէ քո աշխատավարձի աճը չի փակում նոյնիսկ ինֆլյացիան, դա ուղղակի ասում են ինդեքսացիայ: Եւ եթէ սղաճը երկրում մեծ է, կառավարութիւնը պարտաւոր է ամէն տարի այդ ինդեքսացիան անել: [...] Այն, ինչ հիմա աւելացրել են քիչ-քիչ, դա նոյնիսկ ինֆլյացիայի կէսի կէսը չի փակում այս վերջին 3-4 տարուայ ընթացքում», - նշել էր նախկին նախագահը:



Այնուամենայնիւ, ըստ Վիճակագրական կոմիտէի տուեալների, 2018-2020 թուականներին միջին աշխատավարձի տոկոսային աճը մշտապէս

շատ աւելի բարձր է եղել, քան սպառողական գների ինդեքսի աճը եւ միայն 2021 թուականի առաջին եռամսեակում է եղել աւելի ցածր: Յատկապէս այս երկու ցուցանիշների տարբերութիւնը գագաթնէլ է 2019 թուականին, երբ գնաճը կազմել է 1.4 տոկոս, իսկ միջին աշխատավարձի աճը՝ 5.8 տոկոս:

Աղէտի գոտին չվերացաւ, Արցախն էլ չինքնորոշուեց. ինչ էր խոստացել Քոչարեանը

Արարատի մարզում կայացած հանդիպման ընթացքում Քոչարեանը յայտարարեց նաեւ, որ իր երբեք տուած բոլոր խոստումները կատարել է:

«Վստահ եղէք՝ էն մարդիկ չենք, որ սենց գանք ինչ-որ բաներ ասենք եւ չանենք: Ես չկատարած խոստում չունեմ ընդհանրապէս եւ սուտ ասելուց շատ-շատ հեռու եմ», - յայտարարեց Քոչարեանը:

Ի դէպ, իր տուած խոստումները ամբողջութեամբ կատարելու մասին Քոչարեանը յայտարարել էր նաեւ 2008 թուականի Ապրիլի 8-ին՝ իր վերջին ուղերձում:

«Փաստերի Ստուգման Հարթակը» ուսումնասիրել է Քոչարեանի կողմից 2003 թուականի նախընտրական շրջանում տրուած խոստումները եւ պարզել, որ, այնուամենայնիւ, դրանցից ոչ բոլորն են իրականացել:

Մասնաւորապէս, 2003 թուականի նախագահական ընտրութիւնների նախաշեմին Ռոբերտ Քոչարեանը խոստացել էր իւրաքանչիւր տարի երկրում ստեղծել 30-40 հազար աշխատատեղ, բարձրացնել Սեւանայ լճի ջրի մակարդակը 60 սմ-ով, աղէտի գոտին վերածել զարգացման գոտու եւ հասնել Լեւոնային Ղարաբաղի ինքնորոշման միջազգային ճանաչմանը:

Ինչ վերաբերում է Սեւանի մակարդակը 60 սմ-ով բարձրացնելուն, Քոչարեանի պաշտօնավարման երկրորդ կէսում Սեւանայ լճի ջրի մակարդակն իսկապէս շարունակեց բարձրանալ եւ 2003-2008 թուականներին 1897.24 մետրից հասաւ 1898.79 մետրի: Այսինքն, փաստացի, Սեւանի մակարդակը բարձրացել է աւելի քան 1.5 մետրով:

Քոչարեանի մէկ այլ խոստում վերաբերում էր աշխատատեղերի ստեղծմանը: Վերջինս խոստանում էր ամէն տարի երկրում ստեղծել 30-40 հազար աշխատատեղ: Վիճակագրական կոմիտէն այդ տարիների համար գրանցուած աշխատողների վերաբերեալ վիճակագրութիւն չի վարել, եւ յայտնի չէ, թէ որքանով է Քոչարեանին յաջողուել իր նախընտրական խոստումը:

Դուք մեր մարմինը միայն կրնաք կախել, իսկ մեր գաղափարը՝ ո՛չ ՓԱՐԱՄԱՁ

ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ 106-ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ



Կազմակերպութեամբ՝
ՄԴՀԿ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմինի

Գլխաւոր Բանախօս՝
ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան Ատենապետ
ՏՈՔԹ. ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՏԵԱՆ

Պիտի Գործադրուի Օրուան Խորհուրդին նուիրուած
Գեղարուեստական Յայտագիր

Տեղի պիտի ունենայ
Հինգշաբթի, Յունիս 17, 2021
Երեկոյեան ժամը 7:30 ին

ՀԿԲՄ-ի Կեդրոնէն ներս
1060 North Allen Avenue
Pasadena, California 91104

Հրաւիրուած են բոլորը

Յիշելով՝ Տոքթոր-Մտաւորականը (Տք. Թորոս Թորանեանի Յիշատակին)

ԳԵՌԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Տասնամեակ մը առաջ էր, երբ Երեւան մեկնելու համար, դարձեալ ծննդավայր Հալիպա կ'այցելէի, իմ բարի բախտէս, կարողացայ բժիշկ Թորոս Թորանեանին հետ չատուկ ժամադրութեամբ մը տեսնուիլ: Կ'ուզէի անպայման հանդիպիլ:

Ու իբրեւ անձանթ մը, սիրտս բառերուս մէջ բռնած, ուխտաւորի մը անկեղծութեամբ, որոշուած ժամուն, հաւատքս եւ ուրախութիւնս շալկած, գացի զինք տեսնելու: Անկեղծօրէն, առաջին անգամ ըլլալով պիտի հանդիպէի հալիպահայ նման գրողի մը: Զինք մօտէն կամ հեռուէն չէի տեսած, նոյնիսկ ծանօթ չէի իր անունն եւ իր գրիչին: Մէկ խօսքով զինք չէի ճանչնար: Ու աղմկոտ սրճարանի մը անկիւնը տեղաւորուելէ ետք, այդ երեկոյ մենք երկուքով եւ երկար խօսեցանք, քիչ մը ամէն բան: Յաճախ լուծութիւններով խօսեցանք: Ինք, անհամբեր կը սպասէր, որ արդեօք ի՞նչ կամ ինչե՞ր պիտի պատմէր կամ պիտի ըսէր դիմացը նստող եւ երկար տարիներէ ի վեր ամերիկահայ դարձած, բնիկ այս հալիպցին:

Անմիջապէս, հագիւ քանի մը սովորական նախադասութիւններ փոխանակած, իր լոյս ընծայած քանի մը հատորները բռնած, արագ մը սեղանին վրայ դնելով, ցուցամատովը հասկցուց, թէ «ասոնք» ինծի համար էին: Եւ ապա ինք բացումը կատարեց մեր խօսակցութեան: Ու սկսաւ այնպէս մը խօսիլ, որ կարծես իր կեանքին կորսուած հետքերը կ'ուզէր փնտռել: Բայց առաջին իսկ հերթին, ինծի համար ինք տառապանքը շալկած ուխտաւորի մը նմանեցաւ: Կը խօսէր, կարծես թէ մեզի համար կեանքը նոր սկսած ըլլար:

Ու մենք, առանց ժամացույցի սլաքներուն հետեւելու, անհատնում եւ հաճելի գրուցեցինք ու խօսեցանք, ահագին թուղթ վատնած եւ գրիչ մաշեցուցած այս հայուն հետ, սրտբացօրէն եւ անկեղծ: Ինք միշտ միտքը անհանգիստ, սիրտն ու հոգին անհամբեր, յաճախ այրող բառերով կը խօսէր: Կը զգայիր, որ իր այդ տարիքին, հայ հոգին տակաւին չէր յղնած: Կը հաւատար հայու վաղուան արեւին: Ինծի համար իսկապէս, որ հարց էր, թէ ինչպէ՞ս պիտի կարենայի սողալ այս հայ մտքին մէջ: Ի՞նչ կրնայի ըսել այս հայ մարդուն, Մեսրոպեան բանակի այս կամաւոր զինուորագրեալին, որ յանուն հայ գիրին, շարունակ եւ անսակարկ, քրտինք եւ հաւատք եւ օրինակելի կորով թափած էր, որոնց իբրեւ հարազատ արդիւնք տասնամեակներով եւ յաճախ ալ հոգեկան տառապանք հագած եւ նոյնքան ալ ճառագայթում տողերով՝ արտայայտած: Մէկը, որ իր անձն ու գործը կապած էր իր ժողովուրդին, իր հարազատ Արարատեան

երկրին, իր գաղութիւն եւ իր մայրենիի գիրին, մշակոյթին եւ սրտին:

Ահա իր հատորները: Անտառ մը խօսք եւ գործ: Տոքթորը, ազնիւ «տաճառներ» կերտած իր գրիչով, իսկապէս, որ իւրօրինակ դէմք մըն էր: Ահա թէ ինչո՞ւ իր բոլոր խօսքերը, գոյն տուին մտածումներու: Այդ երեկոյ, կարծես մենք երկուքով կը փորձէինք վերագտնել հայն ու հայութիւնը: Սրտցաւ մերձեցում մը կար, մեր ազգային բոլոր ցաւերուն:

Ինք, գրական հասունցած տաղանդ մըն էր, անկասկած: Սովորականին մէջ, անսովորը տեսնելու կարողականութեամբ՝ գրիչ մը, որ ընթերցողին մօտ իր ստեղծագործ կարողութիւններով, կ'արթնցնէր գիտակցութիւնը: Մէկը, որ պայքարած էր «բան» մը պահելու, իր հասուն բառերու տողերով: Ու վերջապէս, հալիպահայ ներկայ իրականութեան մէջ, ամէնէն վաստակաշատ մտաւորականներէն մէկը:

Ու մեր հանդիպման աւարտին, երբ բացայայտեց, թէ իմ հատորներէս ալ ստացած էր, ըսաւ քիչ մը շատ պարզ ու մտերիմ. -

«Գիրքերդ, կը խոստանամ կարդալ... կը կարդամ անպայման եւ կը խօսինք եւ կամ կը գրեմ»:

Ապա անկէ ետքն ալ, կարծես հո՛ս, մեր մօտ, օր մը իր «տարեդարձը» հրապարակային կերպով նշեցին, եւ որուն անձնապէս ներկայ գտնուեցայ, համեստօրէն: Ու պէտք է յիշեմ, որ ան իր խոստումը կատարեց, եւ շուրջ տասը էջերու մէջ ամփոփած իր տպաւորութիւնները ինծի ուղարկեց, որուն համար օրին երախտապարտ շնորհակալութիւններս փոխանցած էի:

Իսկ հիմա, այս օրերուն, ահա իր մահուան բօթը, որ կ'ըսէր. -

«Թորանեան ընտանիքի նահապետ, Սփիւռքահայ յայտնի գրագէտ, գրականագէտ, արուեստի ու գրականութեան իւրօրինակ դեսպան, բժիշկ, շուրջ երկու տասնեակ հատորներու հեղինակ եւ «Մովսէս Խորենացի» շքանշանի մետալակիր Թորոս Թորանեան՝ իր երկրային կեանքէն հրաժեշտ տուաւ 93 տարեկան հասակին»:

Թէեւ շուարած եմ, բայց ինք, իմ գիտակցութեանս առջեւ ներկայ է: Կը փորձեմ կեանքի կոչել, շարել, դասաւորել բոլոր հին ու նոր յուշերս: Կը զգամ, որ մտքիս մէջ իր յիշատակն է, որ կը շրջի տաք, նոյնքան ալ՝ մտերիմ: Ահա, հայ գրող մըն ալ կը հեռանայ, կ'ըսեմ: Հայ գրիչ մըն ալ կը լռէ: Հայ մտքի ու հոգիի շտեմարան մըն ալ իր ստեղծագործ տիրոջմէն կը բաժնուի:


Անուններ կան, որոնք կարծես միասին կը մտածեն: Այսպէս՝ Հալիպա եւ տք. Թորանեան: Երբ, անկեղծօրէն մէկուն մասին կը խօսինք, մեր յիշողութիւնը մաքուր ջուրերուն մէջ նաե՛ւ կը յիշէ այն միւսն ալ: Ահա, այս էր «տողթո-

Մահացած է Գրող Թորոս Թորանեանը

Իննսուներեք տարեկանին մահացած է գրող, հրապարակախօս, արձակագիր, հասարակական գործիչ, բժիշկ Թորոս Թորանեանը:

Թորանեան Հայաստանի Գրողներու Միութեան անդամ էր եւ վերջին տարիներուն կ'ապրէր Հայաստանի մէջ:

Թորոս Թորանեան ծնած է 1928 թուականին, Հալիպա: Անոր ծնողները՝ Խաչերը եւ Վարդուհին, ծնած են Կիլիկեան Հայաստանի Այնթապ քաղաքի ճիւղին գիւղը: Հայրը աւարտած է ծննդավայրի Կիլիկեան վարժարանի վեցամեայ շրջանը եւ տիրապետած է հայոց լեզուին, իսկ մայրը մանուկ հասակին մեծցած է քրտական ընտանիքի մէջ եւ մայրենի լեզուին չէ տիրապետած: Հայրը մահացած է, երբ Թորոս Թորանեան եղած է երկու տարեկան, այդ պատճառով ընտանիքի լեզուն եղած է թրքերէնը: Մինչեւ հինգ տարեկան Թորոսը խօսած է թրքերէն, հայոց լեզու սորված է մանկապարտէզին մէջ: Յաճախած է Հալիպի Կիւլպէնկեան դպրոցը: Ապա ստացած է բժշկական կրթութիւն:



ը»:
Սփիւռքահայ գրականութեան մէջ բժիշկ Թորանեան հաստատապէս հայ գիրին ու գրականութեան, հայ մշակոյթի գեղեցկութեան եւ արժէքին խնկարկու հայ մըն էր: Լաւ դիտող մը: Իր սիրտը մշտական նուիրում եւ զոհաբերում եղած էր ազգին եւ անոր գաւակներուն ու հայ գիրին: Այս մէկը իր մտերիմներուն կողքին, կրնանք հաստատել բոլորս ալ:

Օտարամուտ բարքերու ներխուժումի մեր այս օրերուն, որքան կարիքը ունինք արժէքներու, որոնք նոր սերունդին կը ծանօթացնեն հայ մարդու աւանդական դիմագիծի բոլոր կողմերը: Յատակ է, թէ մարդու մը բնութագիրը, իր ամբողջ կեանքի ընթացքին, իր ստեղծած ու ձեռք ձգածն ու բերածն է: Ահա թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս, իր ստեղծագործութիւններուն ընթերցումներով կը զգաս, որ հրաշալի հոգի մը կայ անոնց մէջ, որ որոշ կորովով, նաեւ կ'արձագանգէ մարդոց մտքերուն՝ արդա-

րօրէն: Հաւատացէ՛ք, բառերս պարզ եւ սովորական խօսքերու չեն նմանիր: Այս տողերը պարզապէս քաղցր ու բարի չուշ մնացած ապրումի մը սկիզբն են: Վերջին հաշուով տղթորը, պարտքը կատարած մարդ մըն էր, որ ճակատագրի բերումով կը բաժնուէր մեզմէ, յաւիտեան: Ան իր խղճի հանդարտութեամբ, իր հետ ոչինչ կը տանէր, բայց անկասկած կը դրոշմէր յանձնառու հայու, մեծ եւ բազմավաստակ մտաւորականի եւ պարկեշտ հասարակական գործիչի անմեղ եւ յստակ պատկերը:

Մեր առաջին հանդիպման աւարտին, բժիշկ Թորանեանին մաղթած էի այնքան բարիք, որոնք իրաւունք ունին ունենալու իրեն նման բոլոր ընտրեալները:

Իսկ այս անգամ կ'ըսեմ. - «Յիշատակն Արդարոց, Օրհնութեամբ եղիցի!»:

Յարգանք, իր հարուստ վաստակին եւ բիւր յարգանք՝ իր բարի յիշատակին:

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Announces the opening of the
2021 AEBU Scholarship Program
Empowering Our Youth for a Brighter Future

To apply, visit our website
WWW.AEBU.ORG

APPLY NOW
Through June 31, 2021

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

626•344•7321
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

ՎԱՐՁՈՒ ՄՐԱԸ
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Վերապրողի Վկայութիւններ Հայրս, Մայրը, Երկու Քոյրերը Յուլիս, 1915

Տ. ԶԱԿԵՆ Ա ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Հօրս Յուշերն

1915 Յուլիսին, հայրս՝ Եղիա, մայրը՝ Սրբուհի, եւ երկու քոյրերը՝ Վարդուհի եւ Աննիճա, էվէրէկէն բռնի գաղթեցին դէպի Կիլիկիա, Սուրիա, Լիբանան: Ապա նախընտրեցին անցնել Եգիպտոս:

Իրենց հայրը, Յակոբ Արզու-մանեան, երկու ամիսներ աւելի կանուխ կեսարիոյ բանտը տարած էին իր կրտսեր տղուն Դանիէլի հետ, նկատի առնելով մեծ հօրս երկարամեայ պատասխանատու պաշտօնը էվէրէկի քաղաքապետա-րանին ուր քաղաքապետի կարեւոր պաշտօնը կը վարէր «եւ շատ բան գիտէր»: Երեք տարի ետք գինա-դադարին ազատ արձակուելով կը վերադառնար էվէրէկ, եւ երկու տարի ետք Երուսաղէմ ուխտի կ'երթար, գոյգ մը մագաղաթեայ ձեռագիր մատենաներ Եղիշէ Պատրի-արք Դուրեանին կը յանձնէր որպէս իր ուխտի նուէրը, ու կը հասնէր Գահիրէ իր երեք գաւակներուն մօտ: Իմ մօտ կը մնայ Դուրեան Պատրիարք Հօր շնորհակալութեան եւ օրհնութեան գիրը ուղղուած մեծ հօրս:

Մինչ երկու հօրաքոյրներս հինգ տարի ետք Միացեալ Նահանգներ գաղթեցին եւ ընտանիք-ներ կազմեցին, մեծ հայրս Գահիրէի մէջ ցկեանս վայելեց իր գաւակին, հարսին ու թոռներուն գուրգուրանքը: Տասնամեայ պատանի լաւ կը յիշեմ զինք երբ յաճախ եկեղեցի կ'առաջնորդէր գիս: Երեք տղաքս եւ մեծ քոյրս Մեծ Հայրիկը շատ լաւ կը յիշեմք:

Եվերէկէն Անդին

Գաղթական հօրս եւ երկու քոյրերուն մայրը 42 տարեկան էր, եւ իրենք տակաւին քսան չհասած, երբ ճամբայ կ'ըլլէին աւանակի մը կռնակին մայրը նստած, եւ կողքի թամբին երկու տոպրակներուն մէջ հաւասարապէս՝ քոյրերը: Ինք քալելով կը հետեւէր գաղթականաց խումբին: Մայրը Ռազմայի մէջ կը մահանար՝ անգերեզման, իսկ երեքը ի վերջոյ կը հասնէին Գահիրէ: Հայրս, լաւատես, աշխատասէր եւ քաջարթուն մարդ, իր երեք տղոց ցած ձայնով, սահմանափակ եւ յուզումնախառն կը պատմէր գաղթականի դժբախտ օրերը, շատ բան չըսելով, եւ սակայն մեր լսածները որպէս վկայութիւն արձանագրելով մեր պատանի յիշողութեան մէջ: Զգոյշ էր որ աւելին պատմելով չխանգարէր մեր միտքն ու երեւակայութիւնը: Կարաւանը պիտի հասնէր Կիլիկիա եւ ապա Սուրիոյ անապատներէն դէպի անծանօթ վայրեր:

Կիլիկիոյ մէջ

Տուն տեղ թողած եւ յակարծ գաղթականի իրավիճակով մարդ անպայման պիտի յուսալքուէր: Այդպէս չէ եղած հօրս պարագային: Կը պատմէր թէ երբ Կիլիկիա հասան, Ատանայի մէջ գաղթակա-նութենէ ետ վերադարձած Կիլիկեցիք սիրով կ'ընդունէին նորեկնե-րը: Նոյնիսկ դերձակի խանութ բացի Ատանայի մէջ, կ'ըսէր, անդամագրուելով նաեւ Ռամկավար Ազատական կուսակցութեան, դառնալով ամենէն երիտասարդ անդա-մը, ինչպէս վերջերս յանակնակալ եւ գարմանքով նկատեցի հրատա-

րակուած հին խմբանկարներէն մէկուն մէջ՝ առջեւը գետին նստած ուրիշ ըներոջ մը հետ: Անդամա-տետրը մեզի յանձնած է եւ այժմ եղբօրս Տօքթ. Յարութիւնին մօտ կը մնայ:

Կը պատմէր թէ երբեմն բարի եւ հիւրասէր թուրքերու ալ կը հանդիպէին որոնք կ'օգնէին, մա-նաւանդ երբ իր դերձակութեան ճամբով բարեկամներ ալ շահած էր որոնք զինք «Ամէն» կը կոչէին ու կը գուարճանային: Հաց բաժնելու ժամերուն ինք եւս շարքին մէջ կ'ըլլար ու իրեն ծանօթները կ'ըսէին «կրկին շարքը մտիր»: Մեծ յոյս ունէր որ Կիլիկիա պիտի վերադառնային գաղթական կիլիկեցիք եւ իրենք ալ մաս պիտի կազմէին Ատանայի հայոց համայնքին: Հոն էր նաեւ վտա-րանդի Տ. Տ. Սահակ Խապայեան վեհապետ Կաթողիկոս իր երկու օգնական եպիսկոպոս-ներով՝ Պետրոս Սարաճեանի եւ Եղիշէ Կարոյեանի:

Կրկին Գաղթական

Կիլիկեան հայոց պիտի չմնար եւ Ֆրանսական ու արեւմտեան խաբեպատիր ցանկութեամբ նորեկ Քեմալական շարժումին կերպիտի դառնար: Հայրս կը պատմէր որ ամբոխին հետեւելով Հայկա ստիպուեցան երթալ ինք եւ քոյրե-րը, մինչ մայրերին մահացած էր երիտասարդ տարիքին: Հայկա գաղթած էին բոլորը, նկատի ունենա-լով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ամենէն ընդարձակ եւ ծաղկուն թեմը, պաշտօնական անուամբ Բեր-իոյ Թեմը, որ միշտ պահած է իր վարչական եւ եկեղեցական ուժն ու գործունէութիւնը:

Հայկաի մէջ, կը պատմէր հայրս, տեսած է առաջին անգամն ըլլալով Միւսուսի մօտէն մատուցուած Կիլիկիոյ Տ.Տ. Սահակ Հայրապետի ձեռամբ: Հոն եղած է նաեւ Աթոռակից Տ.Տ. Բաբգէն Ա Կիլիկիացեան Կաթողիկոսին ընտրու-թիւնն ու Հայրապետական Օծումը մի քանի տարիներ ետք:

Ճակատագրական Ելք

Հայրս այդ մասին անցողակի միայն խօսած է, եւ սակայն ճակատագրական մէկ բացառիկ դարձ-ուածքով ինք եւ քոյրերը այլոց կարգին Հայկապէս պիտի չեղէին կա'մ դէպի Տեյր-Չոր, եւ կամ դէպի Պէյրութ: «Մենք նախըտրե-ցինք Պէյրութ երթալ, քանի որ մեր ուղղութիւնը դէպի Գահիրէ պիտի ըլլար»: Տարի մը մնացին Անթիլիասի աւանին մօտիկ ձել-էլ-տիպ ուր եւս հայրս իր դերձա-կի խանութը բացաւ մօտ տարի մը, մինչեւ կարողացան Գահիրէ փոխադրուիլ: Ինչ պիտի ըլլար եթէ միանային միւս ուղղութեամբ գաղթողներուն... կոտորած եւ մահ:

Սրբազան Վրժ

Ապահով Գահիրէ հասան անօթեվան երկու քոյրեր եւ մէկ եղ-բայր եթէ տարիներու շրջապալու-թենէ ետք, անվերադարձ դէպի հօրենական տունը՝ էվէրէկ: Հիւ-րընկալուեցան իրենց հօրեղբօր Սարգիս Արզումանեանի եւ ընտա-նիքին կողմէ եւ շուտով իրենց բնակարանը հաստատեցին, ինչպէս նաեւ հայրս՝ իր դերձակատունը, որ յետագային եղաւ նաեւ մեր երեք տղոց դասերու պատրաստու-

Հռչակաւոր Կռիւմարտիկ Կարպիս Չաքարեանի Յիշատակին Նուիրուած Յուցահանդես Պոլսոյ Մէջ



Թուրք մարզաշխարհին հա-մար անմոռանալի անուն է պոլսա-հայ արհեստավարժ կռիւմարտիկ, հանգուցեալ Կարպիս Չաքարեան: Ան բազմաթիւ միջազգային մար-զահարթակներու վրայ շատ մը մետալներու արժանացած է, ներ-կայացնելով Թուրքիոյ հանրապե-տութիւնը: Չաքարեանի կեանքն ու գործունէութիւնը ամուր թելե-րով կապուած է Պոլսոյ Պէյօղլուի շրջանին հետ: Այդ իսկ պատճառով Պէյօղլուի քաղաքապետութիւնը իր «Հարազատ գաւակին» յիշատակին որոշեց սարքել ցուցահանդէս մը, նորահաս սերունդին փոխանցելու անոր մարզական աչքառու ժա-ռանգութիւնը:


«Ոսկեայ սրտով կռիւմարտի ձեռնոց» կարգախօսով ցուցահան-դէսի բացման համար ընտրուած էր խորհրդանշական օր մը՝ 3 Յունիս թուականը, որ Կարպիս Չաքարեա-նի ծննդեան օրն էր: Կէսօրին՝ Կալթասարայ հրապարակին վրայ հաւաքուեցան բազմաթիւ հրաւիր-եալներ ու հիւրեր, Պէյօղլուի վար-չային ու քաղաքային պատասխա-նատուներու հետ, բացումը կատա-րելու Կարպիս Չաքարեանի յիշա-տակը ոգեկոչող ցուցահանդէսին: Որպէս տանտէր հանդէս կու գար Պէյօղլուի քաղաքապետ Հայտար Ալի Երլարը: Ներկաներուն մէջ էին Պէյօղլուի գաւառապետ Մուսթա-ֆա Տէմիրէլի, Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սա-հակ Արք. Մաշայեան, Արժ. Տ. Շիրվան Քահնայ. Միւրզեան, Թուրք-իոյ Կռիւմարտի Դաշնակցութեան նախագահ էյուպ Կէօքչէք, Կարպիս Չաքարեանի որդին Գասպար Չա-քարեան, մարմնամարզական միու-թիւններու ներկայացուցիչներ եւ Պէյօղլուի շրջակայքի եկեղեցիներու թաղային խորհուրդներու ան-դամներ:

Ցուցահանդէսը որ Կալթասարայի Լիսէի ներքեւ պատրաստ-ուած էր, զեղեցկօրէն կը ներկայաց-նէր Կարպիս Չաքարեանի կեանքն ու գործունէութիւնը:

Բացօթեայ հանդիսութեան ու-շադրութեամբ հետեւեցան պաշտօ-նական անձեր ու հետաքրքիր հա-սարակութիւնը: Հանդիսավայրին մէջ պատրաստուած էր նաեւ կռիւմարտի մրցարան մը: Պատանիներ կռիւմարտի տարազներով հակիրճ ներկայացում մը կատարեցին:

Պաշտօնական ելոյթներով հան-դէս եկան Պէյօղլուի քաղաքապետ Հայտար Ալի Երլարը, որ ըսաւ «... ուզեցինք իր յիշատակը յարգել մեր ազգային յիշողութեան կարե-ւոր կէտերէն մէկուն»՝ իսթիքլալ

պողոտային վրայ: Սիրով ու յար-գանքով կ'ոգեկոչէնք զինք»: Կար-դացուեցաւ երիտասարդութեան ու մարմնամարզութեան նախարար Մէհմէտ Մուհարէմ Քասաքօղլուի պատգամը: Դրուատալից ելոյթնե-րով հանդէս եկան Պէյօղլուի գաւա-ռապետն ու Գասպար Չաքարեան:



Պատրիարք Հայրը եւս իր սրտի խօսքին մէջ յայտնեց «Երբ ազգեր ու տարբեր հաւաքականու-թիւններ նոյն երկրի հովանիին ներքեւ կը համախմբուին, պարզ-ուած տեսարանը կը դառնայ ոգե-ւորիչ: Թուրքիոյ պարագային եւս ի գորու էր այս մէկը: Կարպիս Չաքարեանը իր գործունէութեամբ, լաւագոյնս ցոյց տուած էր թէ ինչպէս տարբեր հաւաքականու-թիւններ կրնային համախմբուիլ: Ան թէ որպէս մարզիկ եւ թէ որպէս մարդ, ունեցած էր բարեմասնու-թիւններ, ու այս պատճառով անխ-տիր բոլորէն կը գնահատուէր, նոյ-նիսկ յետ մահու»: Չաքարեանի որդին Գասպար Չաքարեան ըսաւ. «առանձնայատուկ է այն բանը որ ցուցահանդէսը կը բացուի Պէյօղլուի մէջ: Հայրս ու մայրս Պէյօղլու ծնած են: Այս թաղի վարժարանին մէջ ուսում ստացած են, հոս է որ ծանօթացած են իրարու ու ամուս-նացած են Պէյօղլուի հայկական եկեղեցւոյ մէջ: Հայրս Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ վարչական պաշտօն ալ ունեցած է: Թաքսիմի Պէյօղլուի ակումբի «Ժողովրդա-կան Տան» մէջ ու Կալթասարայ ակումբին մէջ մարզուած է: Այս բոլոր կեղերներն ալ Պէյօղլուի մէջ են: Ես հոս ուսանած եմ, հոս մկրտուած եմ, հօրս ու մօրս յու-ղարկաւորութիւնը Ս. Երրորդու-թիւն եկեղեցւոյ մէջ եղած են: Այսինքն Պէյօղլու թաղը առանձ-նայատուկ տեղ ունի մեզի համար:

Հոլանտահայ Ընտանիքը իր Հիմնած Գործարարութեամբ Ծանաչելի կը Դարձնէ Հայկական Արտադրանքը



Հոլանտահայ մէջ բնակող Եղիշեաններու ընտանիքը երկրի բնակիչներուն կը ծանօթացնէ հայկական արտադրանքը: Անոնց համայնքին մէջ՝ Զուռլէի մէջ, հայկական խանութները քիչ են, այդ պատճառաւ ընտանիքը նպատակ ունի հոլանտացիներուն ծանաչելի դարձնել հայկական խոհանոցը՝ իրենց հիմնած նոր գործարարութեան միջոցաւ:

«Շուկային մէջ մեր յաճախորդներուն 90 տոկոսը հոլանտացիներ են: Նոյն յարաբերականութիւնն է խանութին մէջ: Զուռլէի հայ համայնքին մէջ շուրջ յիսուն ընտանիք կ'ապրի: Այս թիւը շատ քիչ է պարուստի հարցերը լուծելու համար: Այդ պատճառաւ առաջին մենք կը պահպանենք մեր տեղը շուկային մէջ, ատոր հետ մէկտեղ յաճախորդներուն կը մատնանշենք մեր խանութին տեղը ու կարծես կը յաջողի, շրջանա-

ռութիւնը վատ չէ», - պատմած է Արտակ Եղիշեանը:

Արտակին կինը՝ Աննան ալ կ'ըսէ, որ կ'ուզեն ընկերային ցանցերուն վրայ տարածել իրենց գործունէութիւնը:

«Մենք կ'ուզենք բանալ Youtube-ի ալիք մը, ուր ցոյց կու տանք, թէ ինչ հայկական ուտեստներ կրնանք պատրաստել, յատկապէս հայկական լաւաշը: Ի սկզբանէ, այն կը պատրաստէին կաւէ վառարաններուն մէջ (թոնիր), ինչպէս հիմա ատիկա կը պատրաստուի հայկական գիւղերուն մէջ», - ըսաւ ան:

Աննան եւ Արտակը 2000 թուականին հաստատուած են Հոլանտա՝ որպէս փախստականներ:

Ընտանիքը այստեղ ունեցած է երկու դուստրեր: Անոնց գործարարութիւնը հիմա այն քիչերէն է, որ հայկական իւրաքանչիւր արտադրանքներ կը պատրաստէ եւ կը վաճառէ:

Սայեաթ-Նովան՝ Պրոքլինի Փողոցներէն Մէկուն Մէջ



Օրեր առաջ Պրոքլինի մէջ ապրող երգչուհի Տաթև Եղիազարեանը փակած էր իրենց փողոցը եւ հայկական համերգ մը կազմակերպած էր: Վերջին մէկ տարուան մէջ համաճարակի պատճառաւ մարած էր փողոցի աշխուժութիւնը: Պատուաստումներէն ետք Տաթևը որոշեց բացօթեայ համերգով մը իրենց փողոց վերադարձնել երգն ու երաժշտութիւնը:

Տաթևը կը պատմէ, որ այս գաղափարին համաձայնած են նաեւ

երաժիշտ ընկերները, անոնք ալ թագաժառնի պատճառաւ կարօտցած էին բեմը եւ հանդիսատեսը:

«Մեծաւ մասամբ իմ հեղինակային ստեղծագործութիւններն են, հայկական գործեր, ինչպէս նաեւ ճագ», - ըսած է Տաթևը:

Տաթևին դրացիները կ'ըսեն՝ անոր երգերը շատ գեղեցիկ կը հնչեն, միայն կը տխրին, որ բառերը չեն հասկնար, չնայած ատիկա չէ խանգարած անոնց վայելելու այդ համերգը:

Կը Բացայայտուին Պատերազմի

Շարունակուած էջ 1-էն

Նախաւը՝ թալանելով ոչ միայն պետական գանձը, այլ եւ խլելով զինուորի հացը ու զրկելով զինք պատշաճ զինամթերքէ ու պաշտպանական միջոցներէ:

Պետական մտածողութեան մէջ խօսք մը կայ որ կ'ըսէ. «Պատրաստուիր պատերազմի, ձգտիր խաղաղութեան»: Նախկինները ամբողջութեամբ անտեսելով այս սկզբունքի առաջին մասը, միշտ մեկնած են այն սխալ տրամաբանութենէն, որ մեծ պետութիւնները չեն արտօներ տարածաշրջանի ապակայունացումը եւ եթէ մոյնիսկ պատերազմը վերսկսի Ռուսաստան կը միջամտէ եւ կը դադրեցնէ զայն մի քանի օր ետք, ինչպէս եղաւ 2016-ին: Սակայն, այդ բոլոր ենթադրութիւնները սխալ դուրս եկան ու Արցախը մատնուեցաւ այսօրուայ տխուր վիճակին:

Միջազգային խաղաղութեան Ուսումնասիրութեան Հիմնարկի հրապարակումը մաս կը կազմէ

տարիներու ընթացքին կուտակուած անտեսումի եւ ձախող կառավարման այլ տուեալներուն վրայ, որոնք կու գան մեզ աւելի մօտեցնելու՝ հասկնալու համար պարտութեան իսկական պատճառները:

Հայաստանի նախկին իշխանութիւնները տարիներ շարունակ ինչո՞ւ նման անտեսումի մատնած են երկրի բանակը, այդ է գլխաւոր հարցականը այսօր: Այդ ժամանակաշրջանին երկիրը ղեկավարած ուժերը, այժմ մասնակցելով արտահերթ խորհրդարանական ընտրութիւններուն կը մեղադրեն գործող իշխանութիւնը՝ որպէս «պարտուած», «հող յանձնող» եւ կամ «անձնատուր եղող»: Սակայն, ժողովուրդը իրենց կարծածէն աւելի գիտակից ըլլալով կը կարողանայ ճիշդ ձեւով գնահատել իւրաքանչիւրի պատասխանատուութեան բաժինը ու կը պատրաստուի իր քուէով արտայայտելու իր տեսակետը:

«ՄԱՍԻՍ»

Հարուած Հայաստանին

Շարունակուած էջ 2-էն

է Հայաստանի թիկունքին. ԱԳՆ միջոցով, ԱԳՆ ղեկավար կազմի միջոցով, կամ հարուած է Հայաստանի թիկունքին. ԱԳՆ ղեկավար կազմին հարուածելու միջոցով, ինչը կարող է տեղի ունենալ ըստ հուշեան «քաղաքական դիվերսիայի» նուրբ տեխնոլոգիաների կիրառումով: Ընդ որում, առաւել եւս մտահոգիչ է հանգամանքը, որ դա տեղի է ունենում մի իրավիճակում, երբ Հայաստանում այսպէս ասած եզրափակիչ փուլ է մտել նախընտրական գործընթացն ու սկսել է ակտիւ քարոզարշաւը, որը լինելու է բաւականին կարճատեւ եւ ըստ այդմ դրա մասնակիցները, այդ թւում գործող իշխանութիւնը փորձելու են օգտագործել ամէն միջոցով: Սա նշանակում է, որ մեծ է հաւանականութիւնը, որ ընտրարշաւի ընթացքում չեն լինի ԱԳՆ նոր նշանակումներ, չի լրացուի բացը: Միւս կողմից, այստեղ գուցէ առաջանում է հարց, թէ արդեօ՞ք Հայաստանում չի սկսում կամ չի սկսելու պարզապէս նոր արտգործնախարարութիւն, կամ ԱԳՆ լիովին

նոր վերադաս կազմ ձեւաւորելու եւ ըստ այդմ նաեւ կառուցը ամբողջութեամբ վերաձեւաւորելու լայն գործընթաց: Բայց արդեօ՞ք դա արուելու է «վիրահատական մեթոդով», եւ որքանով է նպատակալարմար եւ ողջախոհ այդ մեթոդի կիրառումը հենց այժմ:

Անկասկած է, որ ստեղծուած իրավիճակն առնուազն պահանջում է ռացիոնալ, պատասխանատու անդրադարձ քաղաքական ղեկավարութիւնից, որը պատասխանատու է պետական մեքենայի աշխատանքի եւ դրա վերաբերեալ հանրութեանը ներկայացուող հաշուետուութեան համար: Ըստ այդմ, նախընտրական քարոզչութեան համար Յունիսի 7-18-ը արձակուրդ մեկնած վարչապետի պաշտօնակատար Նիկոլ Փաշինեանը թերեւս հանրութեան առաջ պարտաւոր է անդրադառնալ ԱԳՆ շուրջ ստեղծուած վիճակին, ընդ որում նախընտրական տրամաբանութիւնից բխող հռետորաբանութիւնից առաւելագոյնս գերծ, որովհետեւ այստեղ պէտք է գերակայի հանրութեան համար հասկանալի պետական տրամաբանութիւնը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Վերապրողի Վկայութիւններ

Շարունակուած էջ 13-էն

թեան վայրը եւ զբօսավայրը: Մեր ընտանիքը եղաւ բազմանդամ, երեք տղաք եւ երեք աղջիկ գաւազներ՝ Տիրամայր Սրբուհիի եւ Հայրիկ Եղիայի երգիքին ներքեւ: Դժուարութիւններ մեր ընտանիքին ներս որեւէ ատեն դժբախտութեան չվերածուեցան, շնորհիւ մեր ծնողաց աջալրջութեան եւ անհատնում համբերութեան: Եղանք եկեղեցույ մօտիկ եւ ընտիր դպրոցականներ, ինչպէս Ազգային վարժարանի տեսչութիւնը կը վկայէր:

Վեց գաւազները լուռ ու մունջ ընտրեցին իրենց ուսումնական հետազօտութիւնները, եղան գործի եւ ընտանիքի անձինք, ամուսնա-

ցան եւ հօրս անցած ճանապարհը մխիթարութեան վերածեցին զինք անկասկած երջանկացնելով: Մնան տասնեւեօթ թոռներ, մինչ հայրս տակաւին ի կեանս էր, եւ ապա քսանեւեօթ ծոռեր մեր Տիրամայր Սրբուհիի երջանիկ հայեացքին ներքեւ: Նոյն պատիւը կ'երթայ նաեւ Ամերիկա գաղթած հօրս երկու քոյրերուն որոնք եւս ընծայեցին չորսական գաւազներ եւ բազում թոռներ: Սրբազան վրէժ յիրաւի:

Այս բոլորին վրայ մեր ծնողքը Ամերիկա պիտի ժամանէին մնալուն բնակութիւն հաստատելով մեր մօտ, ուղիղ քառասուն տարիներ ետք, երբ եղբայր եւ երկու քոյրեր պիտի ողջագուրուէին: Դիւցազներգութիւն յիրաւի:

ՀՈԳԵՐԱՆԳԻՍ



ԱՐԱ ԱՀԱՐՈՆԻԱՆԻ

Հանգուցեալ Արա Ահարոնեանի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Յունիս 2021-ին, Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ (2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107), յաւարտ Ս. Պատարագի:

- Խնդրողներն են՝
- Այրին՝ Տիանա Ահարոնեան
- Դուստրը եւ փեսան՝ Ռիթա եւ Անդրէ Սարուխանեաններ
- Որդին՝ Ալեքս Ահարոնեան
- Տէր եւ Տիկ. Շահէ եւ Արփի Կանիմեաններ
- Տէր եւ Տիկ. Զոհրապ եւ Գարինէ Կանիմեաններ
- Օրդ. Թամար Կանիմեան
- Տոքթ. Շիրազ Կանիմեան
- Տէր եւ Տիկ. Տիրան եւ Աննա Տեփանեաններ
- Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

Հնչակեան Տեսլապաշտ Ղեկավար

Շարունակուած էջ 11-էն

ղակ»ի մը վերածել ՄԱԿ-ը, ուր պիտի գային ինչպէս բոլոր այն ազգերը, որոնք «նեղը դրուելով» ՄԱԿ-ին պիտի դիմէին, յանձնուելու համար «ձայներու մեծամասնութիւն» ունեցող պետութեանց «խնամքներուն»...:

Մինչ այդ, մտահոգ թրծուած սերունդի մը պատրաստութեամբ, հաւատարմով սերնդափոխութեան օրէնքին, յաջորդական դասախօսութիւններով ան պատրաստեց գաղափարապէս կերտուած մտաւորականներու հոյլ մը, որոնք հետագային դարձան ղեկավարներ, խմբագիրներ եւ ուսուցիչներ: Քատրային նպատակաւ թաղաքականութեամբ մը զարկ տուաւ մարզական (ՀՄՄ-ի միջոցաւ), մշակութային (Ն.Ս.Մ.Մ.-ի միջոցաւ) եւ երիտասարդական միութիւններուն: Ապա՝ Հաճնոյ Հայրենակցական Միութեան: Աւելի ուշ՝ կրթական-բարեսիրական միաւորին (Հ.Կ.Բ.Մ.): Որմէ ետք ձեռք ձգելով վստահութիւնը կուսակցական շարքերուն, 1955-ին ընտրուեցաւ ատեն նապետ Ս.Գ.Հ. Կուսակցութեան Լիբանանի շրջանի վարիչ Մարմինին: Յաջորդ երկու հիմնահարցերը եղան 1956-ի եկեղեցական տաճնապը եւ 1958-ի լիբանանեան բուռն իրադարձութիւնները, առաջին քաղաքացիական պատերազմը եւ անոնց զուգահեռ հայ համայնքին երկպառակութիւնը, եղբայրասպան տխուր դէպքերը եւ ներազգային անհանդուրժողականութեան եւ ատելութեան խորացումը: Այս պայթիւններուն առաջին գիծին վրայ էր ան՝ որպէս ձախակողմեան ուժերու կարկառուն լիտըրներէն մին: Ան յստակօրէն կանգնեցաւ էջմիածնի կողքին՝ ընդդիմանալով Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կուսակցական մեծատիրութեան կալուած դարձնելու միտումներուն, որ պիտի իրագործուէր օրուան նախագահ Քամիլ Շամունի ուղղակի եւ բացասական միջամտութեամբ (բռնի ուժով): Անոր հետեւած 58-ի ծանօթ

եւ արիւնալի դէպքերուն վերջ տալու նկատառումով, ինք անձամբ կը նախաձեռնէ հարցին լուծումը ուղղակի կապուելով Հ.Յ.Դ.-ի օրուան ղեկավար Տոքթ. Եղիկ Գոնիալեանի հետ: Ապա՝ 1958 Նոյեմբեր 9-ին մեծ պատուիրակութեամբ մը կ'ուղղուի Մոսկովա՝ սերտ կապեր հաստատելու Ընկերակարան-Յոսոստանի Կուսակցութեան ղեկավար Քամալ ճումպլաթի հետ, որուն մտերմութիւնը վայելեց ան մինչեւ իր մահը:

Նաեւ, ներգրաւուելով լիբանանեան իրադարձութեանց մէջ, կապեր հաստատեց պետական, քաղաքական, կրօնական եւ կուսակցական ղեկավարներու հետ:

1961-ին Խ. Հայաստանի 40-ամեակին առիթով պատուիրակութեամբ մը ուղղուեցաւ հայրենիք: Հոն էր Խ. Միութեան ղեկավար, Կոմկուսի գլխաւոր քարտուղար Նիքիթա խրուշչեւ: Հայրենի եւ սփիւռքահայ ղեկավարներու հետ հանդիպումին, Յ. Կուսակցութեան առիթով գտաւ բարձրացնելու շարքադի եւ Նախիջեանի հարցերը Խ. Միութեան առաջնորդին առջեւ: Այդ մասին մանրամասնօրէն կարելի է կարդալ, որպէս ակնատես վկայ, Ժիրայր Նախիրի «Հայրենի Կտուրին Տակ» հատորին մէջ (1962, Պէյրուսթ): Մինչ այդ, կը դառնայ անդամ միջազգային խաղաղասիրական եւ բարեկամութեան միաւորներու եւ Ք. ճումպլաթի հետ կ'այցելէ Արեւելեան Գերմանիա:

1965-ը կ'ըլլայ ճակատագրական ազգային եւ կուսակցական առումներով: Համազգային տարողութեամբ կ'ոգեկոչուի Մեծ Եղեռնի յիսնամեակը: Լիբանանի հայութեան ազգային գարթօնքն էր նաեւ: Այդ համազգային ոգեւորութեան մէջ Յ. Կուսակցութեան հիմնական դերակատարներէն: Պէյրուսթի Մարտականի անմոռանալի վիթխարի հաւաքին, Ս.Գ.Հ.Կ.-ի պատգամը փոխանցեց ան՝ կոչ ուղղելով ազգային միասնականութեան քաղաքականութեան: Նոր էջ կը բացուէր հայ կեանքին մէջ: Ապա,

երկար եւ ակամայ ընդմիջումէ ետք, Պէյրուսթի մէջ տեղի կ'ունենայ Հնչակեան Կուսակցութեան ԺԱ. Համագումարը եւ Կեդրոնական վարչութիւնը ԱՄՆ-էն կը փոխադրուի Լիբանան եւ այդ համագումարին ատենապետ կ'ընտրուի Յարութիւն Կուսակցութեան, որ այդ պաշտօնին պիտի վերահաս տատուէր ԺԲ. Համագումարին եւս՝ 1972-ին, Պէյրուսթ:

Փաստօրէն, ան վերահաստատեց կուսակցական կեանքին կանոնակարգը՝ իր հերթական համագումարներով:

Ան լիբանանեան կեանքին հետ սերտօրէն առնչուելով, հմտօրէն դիտել տուաւ երեսփոխական ընտրութեանց ձեւին թերութիւնները, յատկապէս 1968-ի ընտրութիւններուն, երբ ժողովուրդին ձայներուն մեծամասնութիւնը կ'անտեսուէր «ցանկեր»ու դրութեան անհետեւ թրամաբանութեամբ: Անոր նշումները կը բղխէին ժողովրդավարական եւ ընկերակարան շահերէ: Այնուհետեւ, 1972-ի ընտրութեանց կարողացաւ յաջողութեան հասցնել Մեթնի միասնական թեկնածու, հնչակեան հակումներով ծանօթ

Արա Երեւանեանը: Աստիճանաբար, Յ. Կուսակցութեան ղեկավարը համախոհութեան, երկխօսութեան, համագործակցութեան ջատագովն ու յառաջապահը:

1975-ի քաղաքացիական պատերազմի սպառնալիքին տակ, ան եղաւ ջահակիրը «դրական չհզորութեան» լուսամիտ եւ հեռատես քաղաքականութեան՝ գերծ պահելով հայութիւնը յումպէտս արիւնահեղութենէ, պատերազմին խորխորատը սայթաքելու գայթակղութենէ: Այս իմաստուն քաղաքականութենէն օգտուեցան բոլորը եւ ապագային բարձրօրէն գնահատուեցաւ լիբանանեան շրջանակներու կողմէ (քրիստոնեայ, մահմետական, պաղեստինեան ու սուրիական կողմերէ): Յիշելու համար մանաւանդ Սուրիոյ փոխնախագահ Ապտըլ Հալիմ Նատտամի հանդիպումը հայ համայնքի ղեկավարներուն հետ 1976-ին՝ ի Պէյրուսթ:

Սակայն, Յարութիւն Կուսակցութեան մնայուն փառապաշար անտարակուսելիօրէն պէտք է նկատել Հ.Կ.Բ.Մ.-ի Սահակեան-Լեւոն Մկրտիչեան գոյնճի շքեղ կառոյցին իրագործումը: Ան, որպէս Հ.Կ.Բ.Մ.-ի ատենապետ, հեռատեսօրէն կը նետուէր սերունդներ կերտելու առաքելութեան եւ տարիներ շարունակ նիւթականի ապահովման համար հասաւ Հարաւային Ամերիկա եւ ԱՄՆ, գաղութի գաղութ գտաւ բարեբարներ, կազմակերպեց ձեռնարկներ եւ քար քարի վրայ բարձրացուց Սահակեանը, որ պիտի տար հայրենասէր ու գաղափար

րանուէր սերունդներ: Ահա հոս էր անոր տեսլապաշտութեան մեծագոյն ապացոյցը: Դպրոցաչին ղեկավարը տեսաւ անոր հիմնարկէքը՝ 28 Յունուար 1973-ին: 1974-ին արդէն վերամուտը տեղի կ'ունենար գեղակերտ կառոյցէն ներս: Սահակեանը մնայուն յուշկոթողն է մեծ ղեկավարին:

1976-ը եղաւ բախտորոշ. մէկ կողմէ լիբանանեան քաղաքացիական պատերազմը ու անոր մուսլիմ հետեւանքները եւ ապա Յ. Կուսակցութեան մահը յօդու ցնդեցուցին բազմ-բազմ ծրագրեր: Հնչակեան Կուսակցութիւնը կորսնցուց իր անկրկնելի ղեկավարը...:

Հ. Անդրանիկ Վրդ. Կուսեան կը գրէ. «Բարդ կացութիւններու դիւրիչն էր: Կնճուտ վիճաբանութիւններու՝ մարձողը: Զիդերու եւ միտքերու հանգոյցները գիտէր պարզել, քաղցրացնել: Ծայրայեղութիւններէ խուսափող իր բնատրութեամբ գինք դարձուց համերաշխութիւններու մարդը: Իր իսկական բարոյական հասակը ալ աւելի ծանօթ դարձաւ Եղեռնի 60-ամեակի համագործակցութեան օրերուն, եւ մանաւանդ Լիբանանը հարուածող այս ազգակործան վերջին ամիսներուն, երբ հարկ էր հայութիւնը միաձուլ պահել ընդդէմ ներքին թէ արտաքին խոչընդոտներուն»:

Հ.Յ.Դ.-ի ղեկավարներէն, պատմաբան, գործիչ Երուանդ Փամպուքեանի խօսքէն. «Ազգային հարցերու ծնօթութիւնը իր մօտ իսկապէս ամբողջութիւն մը կը ներկայացնէր. ատով ալ կը բացատրուի այն միւս երեւոյթը, որ Կուսակցութեան քաղաքացիական մահը, իր հետաքրքրութեանց եւ մտահոգութեանց ամէնօրեայ առարկան դարձուց դպրոցն ու եկեղեցին, մամուլն ու գրականութիւնը, հայրենիքն ու սփիւռքը:

Վերջապէս, հանրային գործիչի ուսանելի տիպար մըն էր Յ. Կուսակցութեան, որ իր ամբարած գիտելիքներուն ճամբով հասած էր իր ղեկավարի դիրքին, ու ձեռով մը Հայաստանն ու հայութիւնը կը պտտցնէր իրեն հետ»:

Պ. Սիմոնեան հետեւեալ բանաստեղծութիւնները կը թուարկէ որպէս ժառանգ մնացած անկէ-խոհեմ, շրջահայեաց, իմաստուն, ձկուն, լրջամիտ եւ յարգանք ու վստահութիւն ներշնչող կեցուածք ունեցող:

2002-ին Պ. Սիմոնեանի խմբագրութեամբ լոյս տեսած «Լիբանանահայութեան Ղեկավարի Տիպարներէն» Յրութիւն Կուսակցութեան համապարփակ ու շահեկան տեղեկութիւններ կը փոխանցէ անոր մասին:

Մնայուն յիշատակարան մը Յարութիւն Կուսակցութեան:

Հնչակաւոր Կռիւմարտիկ Կարպիս Զաքարեան

Շարունակուած էջ 13-էն

Շնորհակալ եմ ձեր բոլորին այս ցուցահանդէսը կազմակերպելուն համար:

Կռիւմարտի Դաշակցութեան նախագահ էլուպ Կէօզլեկ նշեց որ Կարպիս Զաքարեան իր ծնունդէն մինչեւ իր մահը, 90 տարի շարունակ, միշտ պահեց թէ՛ իր մարզական կեցուածքը եւ թէ՛ սերունդներուն օրինակ հանդիսանալու պատիւը: Իսկ անդադարաւոր հայթիւրեան յարաբերութիւններու մասին եզրակացուց «... մենք եղ-

բայր ենք, եղբայր պիտի մնանք»:
Հանդիսութեան առիթով Պէյրուսթի քաղաքապետին ձեռամբ «Կարպիս Զաքարեան, Ալթըն Գալիլը էլտիվէն» գիրքէն օրինակ մը նուիրուեցաւ Պատրիարք Հօր: Յաջորդաբար, ներկաներն այցելեցին ցուցահանդէսի սրահը եւ հետաքրքրութեամբ տեսան Զաքարեանի նկարներն ու անձնական իրերը: Հանդիսութեանն ու անձնական իրերը հասաւ խմբային նկարահանումով: Յուզահանդէսը շարունակուեցաւ մինչեւ 10 Յունիս, Հինգշաբթի: «Մարմար»

Ամերիկյան Դարձաւ ՔՈՆՔԱՔԱՑ-ի Ազգերու Լիգայի Առաջին Ախոյեան



Ֆուտպոլի ԱՄՆ-ի հաւաքականը նուաճեց ՔՈՆՔԱՔԱՑ-ի (Հիւսիսային, եւ կեդրոնական ամերիկաներու եւ Քարիպեան կղզիներու ֆուտպոլի ֆետերասիոն) Ազգերու լիգայի ախոյեանութիւնը: Եզրափակիչին ամերիկացիները աւելցած ժամանակին 3:2 արդիւնքով յաղթեց Մեքսիքայի հաւաքականին:

ԱՄՆ-ի հաւաքականի յաղթական կողմ նշանակեց Ախոյեաններու Լիգայի գաւաթակիր Լոնտոնի «Չելսիի» կիսապաշտպան Քրիստիան Պուլիսիչը, որ անվրէպ կատարեց 11 մեթրանոց հարուածը:

ՔՈՆՔԱՔԱՑ-ի Ազգերու Լիգայի ախոյեանութիւնը տեղի կ'ունենար առաջին անգամ ըլլալով:

Երրորդ տեղի համար պայքարին Հոնոլուրասը յետխաղեային 11 մեթրանոցներով յաղթեց Քոսթա Ռիքային:

Պեպ Գուարդիոլան՝ Պրեմիեր Լիգայի Լաւագոյն Մարզիչ

«Մանչեսթր Սիթիի» գլխաւոր մարզիչ Պեպ Գուարդիոլան ճանչուած է Փրեմիեր Լիգայի 2020/21 մրցաշրջանի լաւագոյն մարզիչ:

50-ամեայ մարզիչը երրորդ անգամ է որ կը դառնայ Փրեմիեր լիգայի լաւագոյն մասնագէտ (2018, 2019, 2021): Ընթացիկ տարուան «Մանչեսթր Սիթիին» Գուարդիոլայի գլխաւորութեամբ դարձած է Անգլիոյ ախոյեան, իսկ Ախոյեաններու Լիգայի եզրափակիչին զիջեցաւ Լոնտոնի «Չելսիին»:



Պեպ Գուարդիոլան «Մանչեսթր Սիթիի» գլխաւոր մարզիչ պաշտօնը ստանձնեց 2016 թուականից: Աւելի վաղ սպանացի մասնագէտը կը գլխաւորէր Միլնիթի «Պալըմը» եւ գատալոնական «Պարսելոնան»:

«Պորուսիան» 200 Միլիոն Եւրօ Կը Պահանջէ Երլինգ Զոլանդի Զամար

Տորտմոնտի «Պորուսիան» յառաջիկայ տեղափոխման առիթի ընթացքին նորուէկիացի յարձակող էրլինգ Զոլանտին կը վաճառուի, եթէ ստանայ 200 միլիոն եւրոյի առաջարկ, կը հաղորդէ սպանական AS-ը:

20-ամեայ ֆուտպոլիստի ծառայութիւններով հետաքրքրուած են անգլիական «Մանչեսթր Սիթիին», «Մանչեսթր Յունայթըտը», «Չելսիին», Մատրիտի «Ռեալն» ու գատալոնական «Պարսելոնան»:

Ըստ Transfermarkt.com-ը էրլինգ Զոլանտի արժեքը կը գնահատուի 110 միլիոն եւրօ: Աւարտած մրցաշրջանին էրլինգ Զոլանտը տորտմոնտեան խումբի հետ մասնակցած է 40 հանդիպման, նշանակած է 40 կոլ, կատարած՝ 11 կոլային փոխանցում:



Ալեքսանտր Կարապետեանը Միացաւ «Նոային»

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականի 33-ամեայ յարձակող Ալեքսանտր Կարապետեանը պայմանագիր կնքած է «Նոայի» հետ, կը հաղորդէ երեւանեան ակումբի մամուլի ծառայութիւնը:

Ալեքսանտր Կարապետեանը հանդէս եկած է շարք մը գերմանական եւ լիւքսեմպուրկեան ակումբներու մէջ, նաեւ ռուսական «Սոչիի» եւ «Տամբովի» մէջ: Անոր նախորդ ակումբը «Արարատ Արմենիան» էր:

Ընդհատուեցաւ Հայաստանի Հաւաքականի Անպարտելի Խաղերու Շարքը



Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականը ընկերական խաղի ընթացքին մրցեցաւ Շուէտի ազգային խումբին հետ: Սոլնայի «Ֆրենդս Արենա» մարզադաշտին վրայ կայացած խումբերու անդրանիկ հակամարտութիւնը աւարտեցաւ շուէտ ֆուտպոլիստներու յաղթանակով:

Տանտէրերի կազմին մէջ առաջին խաղակազմին աչքի ինկան էմիլ Ֆորսպերգը եւ Մարկուս Տանիելսոնը, իսկ երկրորդին՝ Մարկուս Պերգը: Հայաստանի հաւաքականէն միակ պատասխան կողմ 64-րդ վայրկեանին նշանակեց Վահան Բիչախիթեանը: Հանդիպման 38-րդ վայրկեանին տանտէրերը չկարողացան իրացնել 11մ հարուածը: Այն ետ մղեց Հայաստանի դարպասապահ Դաւիթ Եուրջենկոն:

Այդպիսով, Շուէտի հաւաքականը յաղթեց 3:1 հաշուով եւ ընդհատեց Հայաստանի ընտրանիի 9 անպարտելի խաղէ բաղկացած շարքը: Հայաստան յաջորդ հանդիպումը կը խաղայ Սեպտեմբերին, աշխարհի առաջնութեան փուլին:

Դատարանը Արգիլած Է ՈւեֆԱ-ին Եւ ՖիֆԱ-ին Պատժամիջոցներ Կիրառել Սուփերլիգայի Ակումբներուն Դէմ

Զուրիցերիոյ Արդարադատութեան նախարարութիւնը Ֆուտպոլի Միջազգային ֆեդերացիային (ՖիֆԱ) եւ Ֆուտպոլային Ասոցիացիաներու Եւրոպական Միութեանը (ՈւեֆԱ) պաշտօնապէս ծանուցած է, որ այդ կազմակերպութիւնները իրաւունք չունին պատժամիջոցներ կիրառել Եւրոպական Սուփերլիգային դուրս չեկած ակումբներուն դէմ:

ՖիֆԱ-ն ու ՈւեֆԱ-ն կը գտնուին Զուրիցերիոյ մէջ: Սուփերլիգայի նախագէն դուրս չեն եկած Մատրիտի «Ռեալը», գաթալոնական «Պարսելոնան» եւ Թուրինի «Եուլտուստաը»: Երեք ակումբները Եւրոպական դատարանին մէջ կը վիճարկեն ՈւեֆԱ-ի կարգապահական որոշումները՝ կազմակերպութեանը մեղադրելով մրցակցութեան սկզբունքներու խախտման եւ իրաւազանցութեան մէջ:

Սուփերլիգայի 12 հիմնադիր ակումբներէն 9-ը ազգային ֆեդերացիաներու, ակումբներու երկրպագուներու եւ ՖիֆԱ-ի ու ՈւեֆԱ-ի ճնշման տակ հրաժարեցան նախագէն:

ՈւեֆԱ-ն 9 ակումբներուն պատժած էր 15 միլիոն եւրօ բարեգործական վճարով եւ եւրօգաւաթային մրցաշարերու պարգեւավճարէն 5 տոկոսի վերադարձով:

Գանատան՝ Հոքիի Աշխարհի Ախոյեան



Լատվիայի մայրաքաղաք Ռիկայի մէջ կայացած հոքիի աշխարհի առաջնութիւնը երեք պարտութիւնով սկսած Գանատայի հաւաքականը նուաճեց ախոյեանի տիտղոսը:

Եզրափակիչին գանատացիները մրցեցան նախորդ առաջնութեան ախոյեան Ֆինլանտայի հաւաքականի հետ եւ առաւելութեան հասան յաւելեալ երկրարձգուած խաղի ընթացքին՝ 3:2 (1:0, 0:1, 1:1, 1:0):

Գանատան 27-րդ անգամ դարձաւ աշխարհի ախոյեան եւ հաւասարեցաւ իսրայէլ/Ռուսաստանին:

Պրոնգէ մետալները նուաճեց ԱՄՆ-ի հաւաքականը, որ 6:1 հաշուով պարտութեան մատնեց գերմանացիներուն: